8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 222(4840)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651
9 771829 165003 11222

# Վիլֆրիդ Մարտենսը՝ ՀՀ նախագահին. «Այսօրվանից Ձեզ կարող եք համարել ԵԺԿ մեծ ընտանիքի անդամ»

**ԵԺԿ նախագահ Վիլֆրիդ Մարտենսը ԵԺԿ կոնգրեսի առաջին լիագումար նիստում ունեցած ելույթի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին հրավիրել է մասնակցելու Եվրոպական երկրների ու կառավարությունների ղեկավարների գագաթաժողովին: Այս մասին հայտնում է Panorama.am-ի թղթակիցը:**

**«Այսօրվանից Դուք Ձեզ կարող եք համարել Եվրոպական ժողովրդական կուսակցության մեծ ընտանիքի անդամ»,- դիմելով ՀՀ նախագահին՝ հայտարարել է Վիլֆրեդ Մարտենսն ու ելույթից հետո հանդիսավոր կերպով ՀՀ նախագահին փոխանցել գագաթաժողովին մասնակցելու հրավեր:**

**Վիլֆրիդ Մարտենսն իր ելույթում անդրադարձել է Հայաստանի ձեռքբերումներին, կարեւորել Հայաստանի նախագահի մասնակցությունը Կոնգրեսին:**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Դժվար բան է բարերար լինելը

**Ամերիկահայ մի ընկեր ունեմ, որ տարին առնվազն երկու անգամ Հայաստան է այցելում, շրջում հեռավոր գյուղեր, արցախյան բնակավայրեր եւ բարերարություն անում դպրոցներին՝ կաթսայատուն է սարքում կամ վերանորոգում, լաբորատորիա ու գրադարան ստեղծում, դպրոցաշենքերի տանիք նորոգում եւ նման բաներ: Հարուստ չէ ընկերս: Լավ վարձատրվող ինժեներ է պարզապես, որ գոհունակություն է ապրում հայրենի մատաղ սերնդին օգտակար լինելուց:**

**Վերջին այցին կրկին հանդիպեցինք: Առաջարկեցի մեր թերթում հարցազրույցով ներկայացնել իրեն: Կտրուկ մերժեց: Ոչ միայն համեստ է ընկերս, այլ նաեւ զգուշանում է գովազդից: «Գյուղական դպրոցները շատ կարիքներ ունին,- ասաց,- երբ անունդ գիտնան՝ տնօրենները կթափին վրադ»: Մինչդեռ ինքը սիրում է անձամբ ընտրել-որոշել բարերարության արժանի՝ այսպես կոչված «օբյեկտը»: Բացի դրանից...**

**«Գիտե՞ս,- ասում է,- շատ դժվար բան է Հայաստանի մեջ նվիրատվություն ընելը: Սկիզբը շատ երախտապարտ կըլլան, չեն գիտեր՝ ինչպես հայտնեն իրենց երախտագիտությունը»: «Է, բնական չէ՞», հարց եմ տալիս ես: «Անշուշտ, բնական է, նույնիսկ՝ հուզիչ: Սակայն անմիջապես հետո կունենան երկրորդ մտածում (second thought) մը՝ այս մարդը արդյոք որքա՞ն հարուստ է, որ ինծի կօգնէ»: «Դա էլ անբնական չէ», փորձում եմ արդարացնել հայրենակիցներիս: «Թերեւս,- ասում է ընկերս,- բայց ամենավտանգավորը երրորդ մտածումն է՝ այս մարդը արդյոք ի՞նչ շահ ունի ինծի օգնելու մեջ, հարկավ անձնական շահ մը ունենալու է, կխորհին»...**

**Մեկ անգամ չէ, որ Vivacell (Կ-Տելեկոմ) ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը հայտարարել է, թե ինքը քաղաքական նկրտումներ ու հավակնություններ չունի Հայաստանում, թե իր գլխավորած ընկերությունը բարեգործական տարբեր ծրագրեր է իրականացնում Հայաստանում այն գիտակցությամբ, որ իր շահն ու շահույթը այս երկրից եւ այս ժողովրդից է գոյանում, հետեւաբար բարոյապես պարտավոր է իր շահածի ինչ-որ մասը վերադարձնել այս երկրին եւ այս ժողովրդին: Ավելին՝ նա կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն ստանձնելու կոչ է անում մեր երկրում գործող մյուս ընկերություններին, իր օրինակով:**

**Որոշակի չգիտեմ՝ մյուս ընկերությունների պարագայում Յիրիկյանի կոչը տեղ հասնո՞ւմ է: Բայց գիտեմ՝ մեր մամուլի եւ հատկապես նրա որոշ ներկայացուցիչների վրա հակառակ ազդեցությունն են գործում նման կոչերն ու հայտարարությունները: Վերջիններս ունեն իրենց որոշակի օրակարգը (agenda), որին հավատարիմ են միշտ՝ հետին մտքեր, խարդավանք ու դավադրություն փնտրել նաեւ այնտեղ, որտեղ դրանք չկան... Անցյալ շաբաթ այդ լրատվամիջոցները «ցնցիչ» վերնագրի ներքո կրկին անդրադարձան Ռ. Յիրիկյանի քաղաքական-նախագահական «նկրտումներին», օգտագործելով ռուսական ինչ-որ կայքէջի պնդումները MTC-ի մոսկովյան կենտրոնից իբր 90 մլն դոլարի Երեւան փոխանցման «բուն» նպատակների մասին: Եվ այնպիսի ոգեւորությամբ ու համոզվածությամբ զարգացրին իրենց խարդավանքային տեսությունները, որ Vivacell-ը ստիպված եղավ կրկին հանդես գալ հերքման հաղորդագրությամբ, որին, ի դեպ, նշյալ լրատվամիջոցները ընթացք չտվեցին: Եվ վստահ եմ, մոտ ապագայում նրանք նորից կկրկնեն իրենց սիրած կրկներգը, քանի որ երրորդ մտածումը նրանց հուշում է՝ «եթե շահ չունի, ինչո՞ւ է օգնում»...**

**Ի դեպ, ամերիկահայ ընկերս, հակառակ երկրորդ ու երրորդ մտածումների առկայությանը, անտրտունջ եւ անվհատ շարունակում է օգնել սահմանամերձ շրջանների մեր դպրոցներին:**

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Հիշատակի միջոցառումներ Գյումրիում

Արդեն 23-րդ անգամ դեկտեմբերի 7-ը Գյումրիում սկսվեց քաղաքային գերեզմանատներ՝ 88-ի դաժան արհավիրքի անմեղ զոհերի շիրիմներին մարդկանց զանգվածային այցելությամբ, Սբ Յոթվերք եւ մյուս եկեղեցիներում նրանց հիշատակին մատուցված հոգեւոր պատարագով: Կեսօրին մոտ հիշատակի արարողություններին մասնակցեց Սպիտակից ու Վանաձորից հետո այստեղ ժամանած ՀՀ կառավարական պատվիրակությունը վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ: Քաղաքի կենտրոնում, վերականգնվող Ս. Ամենափրկիչ եկեղեցուն հարակից տարածքում գտնվող «Անմեղ զոհերին, բարեգութ որտերին» հուշարձանին ծաղկեպսակներ դրվեցին Հայաստանի նախագահի, պետական, հասարակական, կրթական, մշակութային եւ այլ կառույցների կողմից, նաեւ հոգեհանգստյան կարգ կատարվեց:




Գյումրուց հետո վարչապետն ու նրան ուղեկցող անձինք այցելել են Շիրակի մարզի Ամասիայի նախկին շրջկենտրոն, մասնակցել այստեղ հիմնանորոգված՝ 60 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի եւ առողջության կենտրոնի բացմանը: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ նորոգված մանկապարտեզի շենքում, որի շինաշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 100 մլն դրամ, ստեղծված են մանուկների դաստիարակության, ժամանցի, կենցաղի ու հանգստի լավ պայմաններ, իսկ երկրորդ հարկում տեղակայված՝ 80 հոգու համար նախատեսված հանդիսությունների դահլիճը կարող է օգտագործվել նաեւ համայնքային միջոցառումների համար: Իսկ շինաշխատանքների 88 մլն դրամ արժեքով, համայնքի եւ նրան հարակից բնակավայրերի շուրջ 9 հազար բնակչի սպասարկող բուժհաստատությունն ունի անհրաժեշտ բուժսարքավորումներով համալրված ծննդատուն, պոլիկլինիկա եւ շտապօգնության ծառայություն:

Վարչապետն այցելել է նաեւ Ամասիայի տեքստիլ արդյունաբերության գործարան, ծանոթացել նրա արտադրական գործընթացին: Հանրապետության այս հեռավոր բնակավայրում այսօր 105 աշխատատեղ ապահովող ձեռնարկության արտադրանքն ամբողջությամբ արտահանվում է Գերմանիա:

Գ. Մ.

# Հռոմի պապը Վատիկանում կհյուրընկալի ՀՀ նախագահին

**Kathweb-ի՝ Ավստրիայի կաթոլիկական մամուլի գործակալության հաղորդմամբ, առաջիկա երկուշաբթի՝ դեկտեմբերի 12-ին Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը Վատիկանում կհյուրընկալի Հարավկովկասյան անկախ երկրի՝ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին:**

**Գործակալությունը հիշեցնում է, թե իր ընտրությունից շաբաթներ անց Հայաստանի նախագահ Սարգսյանը Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդին Հայաստան այցի հրավեր էր ուղարկել, որը պապին փոխանցել էր Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն 2008-ին Վատիկան այցելության ժամանակ:**

Ան. Հ., Գերմանիա

# 9-բալանոց երկրաշարժի դեպքում մայրաքաղաքի շենքերի 60%-ը կփլվի

**Նման կարծիք երեկ «Նովոստի» ակումբում հայտնեց ԱԻՆ ՍՊԱԾ շենք-շինությունների սեյսմակայունության բաժնի պետ Գուրգեն Նամալյանը: «9 եւ ավելի բալանոց երկրաշարժի դեպքում մարդկային զոհերի թիվը կարող է հասնել 300.000-ի, իսկ նյութական վնասն ավելի բարձր կլինի, քան 1988-ի Սպիտակի երկրաշարժի դեպքում»: Նամալյանի մեկնաբանությամբ՝ հանրապետության խոշոր քաղաքների տիպային շենքերի զգալի քանակը կառուցվել է խորհրդային տարիներին եւ հաշվարկված չէ 9 բալ ուժգնությամբ ցնցումների համար: Մասնագետը հավելում է, որ սեյսմիկ առումով խոցելի են հատկապես 9-հարկանի կարկասային շենքերը եւ 5-հարկանի քարե շենքերը, որոնք կառուցվել են 60-70-ական թվականներին:**

**ԱԻՆ ՍՊԱԾ շենք-շինությունների սեյսմակայունության բաժնի պետ Գուրգեն Նամալյանի կարծիքով՝ 1988 թ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ լայնածավալ ավերածություններ տեղի ունեցան սեյսմիկ սպառնալիքի թերագնահատման, սեյսմիկ շինարարության անկատար նորմերի, կոպիտ նախագծային սխալների, շինարարական աշխատանքների ցածր որակի, շենքերի նախագծային կառուցվածքներում բնակիչների կամայական փոփոխությունների պատճառով:** Հ. Հ.

# Հունաստանն ընդունեց 2012-ի հակաճգնաժամային բյուջեն

**Հունաստանի խորհրդարանը ընդունել է 2012-ի բյուջեն, որտեղ պակասորդը կազմում է ՀՆԱ 5,4 տոկոսը: Նոր փաստաթուղթը պետական ծախսերի կրճատմանն ուղղված կտրուկ միջոցներ է պարունակում, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: 2011-ի բյուջեում պակասորդը կազմում էր 9 տոկոս: Նոր բյուջեն Աթենքին հնարավորություն կտա ԵՄ-ից եւ ԱՄՀ-ից ստանալ օգնության երկրորդ փաթեթը՝ 130 մլրդ եվրո:**

**Սպասվում է, որ 2012-ին Հունաստանի տնտեսական անկումը կկազմի ՀՆԱ-ի 2,8 տոկոսը, մինչդեռ 2011-ին այդ ցուցանիշը 5 տոկոս էր: Այսպիսով, երկրում տնտեսական նահանջը կշարունակվի 4-րդ տարին անընդմեջ: 2009-ին ՀՆԱ-ն կրճատվել էր 2,3 տոկոսով, իսկ 2010-ին՝ 4,3 տոկոսով: Գործազրկության մակարդակը ներկայիս 15,4 տոկոսի փոխարեն եկող տարի կկազմի 17,1 տոկոս:**

# «Վախենամ՝ Էրդողանը ներողություն խնդրի նաեւ հայերից. հենց դա է Դերսիմի առնչությամբ ներողություն խնդրելու բուն նպատակը»

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հայկական դավադրության որոնումները թուրքական իրականության անբուժելի հիվանդությունն են: Դրանով տառապում են ինչպես իշխանությունները, այնպես էլ հասարակական-քաղաքական շրջանակները, ներառյալ ժողովրդական զանգվածները: Դա պատահական չէ, այլ պայմանավորված է հանցագործի այն հոգեբանությամբ, որով հավասարապես տառապում են թուրքական իշխանություններն ու հասարակությունը, որովհետեւ իշխանությունների կազմակերպած Հայոց ցեղասպանությանը սիրահոժար մասնակցել են ժողովրդական ընչաքաղց զանգվածները:

Հենց այդ մասնակցությամբ է բացատրվում ցեղասպանության ժխտողականության հարցում դրսեւորվող իշխանություն-հասարակություն համերաշխությունը Թուրքիայում: Թուրքական իրականության մեջ հայկական դավադրության որոնումներն ունենում են տարբեր դրսեւորումներ, սակայն անկախ տարբերությունից, դրանք վառ պահելով հայերի եւ Հայաստանի նկատմամբ շարքային թուրքի ենթագիտակցության մեջ արմատավորված ատելությունն ու թշնամանքը, երկրում հայատյացության ծավալման պատճառ են դառնում:

Հատկանշական է, որ Թուրքիայում հայատյացության ծավալումն էլ իբրեւ առաջադրանք ընդհանուր է «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ «Ազգայնական շարժում» կուսակցության հրոսակների ու թուրքական գաղտնի ծառայությունների ուղղորդած ձախակողմյան ստահակների համար: Մինչդեռ այս հրոսակներն ու ստահակները միշտ էլ եղել են ոխերիմ թշնամիներ: 70-ականներին նրանք Թուրքիան դարձրել էին արյունահեղ բախումների թատերաբեմ, օրական փոխադարձաբար սպանելով մինչեւ 20 մարդ:

Համենայն դեպս, 1937-38 թթ. Դերսիմի իրադարձությունների քննարկումները հայկական դավադրության որոնումների դրսեւորման նոր առիթ հանդիսացան թուրքական շրջանակների համար: Քննարկումների հիմքը դեռեւս 2009-ին դրել էր վարչապետ Էրդողանը, բնութագրելով թուրքական պատմագրության մեջ որպես ապստամբություն հիշատակվող իրադարձությունները Դերսիմի կոտորած:

Մինչ Թուրքիայում ծավալվում էին Դերսիմի իրադարձությունների քննարկումները, որոնց հետեւանքով 1935-ին Թունջելի վերանվանված Դերսիմում սպանվել է 50 հազար մարդ, բնակիչները աքսորվել, այսինքն տեղահանության են ենթարկվել, էլ չենք խոսում անհետ կորածների եւ այն հազարավոր երեխաների մասին, որոնց, ծնողազրկելուց հետո, որբանոցներ կամ թուրք ընտանիքներին հանձնելու միջոցով թուրքացրել էին:

Տես էջ 5

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

# Կառավարության հրաժարականի պահանջը եւ վարչապետի արձագանքը

Երեկ ԱԺ-ում ՀՅԴ խմբակցության անունից հարցապնդմամբ հանդես եկավ պատգամավոր **Արմեն Ռուստամյանը**: Հարցապնդումը, ինչպես եւ 2008-ին ՀՅԴ նույնաստիպ նախաձեռնությունը, վերաբերում է կառավարությանը անվստահություն հայտնելուն: ՀՅԴ ներկայացուցիչը մասնավորապես ընդգծեց, որ «հենց կառավարության ոչ ադեկվատ քայլերի հետեւանքով» երկրում ահագնանում է աղքատությունը, արտագաղթը, եւ որ «կառավարության ամեն տարի միջինը 1 մլրդ դոլարով մեծացնում է ՀՀ արտաքին պարտքը, ինչը այսօր դարձել է շուրջ 4 մլրդ դոլար»: Ու այս ամենից ելնելով՝ Ռուստամյանը առաջարկեց ԱԺ քաղաքական մեծամասնությանը օժանդակել իրենց, որպեսզի հավաքվի 27 պատգամավորական ստորագրություն՝ դիմելու նախագահ Սարգսյանին՝ քննելու կառավարությանը անվստահություն հայտնելու հարցը: Հասկանշական է, որ այս առումով ԱԺ-ում 16 հոգով ներկայացված ՀՅԴ-ին, եթե միանա նաեւ խորհրդարանական մյուս ընդդիմադիր «Ժառանգությունը»՝ իր 7 պատգամավորներով, անհրաժեշտ է ընդամենը 4 ստորագրություն, որոնք կարող են լինել նաեւ անկախ պատգամավորական: Ինչեւէ, տեսնելով, որ այդ պահին ԱԺ դահլիճում քվորում չկա (մեր հաշվարկներով ներկա էր ընդամենը 21 պատգամավոր), Ռուստամյանը առաջարկեց ԱԺ նախագահությանը՝ հարցը քվեարկության դնել վաղը: ԱԺ նորընտիր նախագահ **Սամվել Նիկոյանը** խոստացավ՝ «մենք անհրաժեշտ քվորումը կապահովենք»:

Արդեն երեկոյան՝ Ազգային ժողովում վարչապետի ավանդական ճեպազրույցի ժամանակ **Տիգրան Սարգսյանը**, անդրադառնալով իր կաբինետին անվստահություն հայտնելու ՀՅԴ նախաձեռնությանը, ասաց. «Դա քաղաքական ընդդիմության իրավունքն է», այդուհանդերձ՝ վարչապետի խոսքերով՝ «Հայաստանում այսօր իրավիճակն այնպիսին չէ, որ կառավարությունը հրաժարական տա», մանավանդ որ, կրկին վարչապետի խոսքերով, «կառավարությունը ԱԺ-ում ունի քաղաքական մեծամասնություն», իսկ առհասարակ՝ «կառավարության հենասյունը ԱԺ-ում բոլոր երեք կոալիցիոն կուսակցություններն են, ու այս առումով, ես կարծում եմ, ոչինչ չի փոխվել», ընդգծեց վարչապետը:

Հ. Ա.

ՏԽՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# 300.000 հայ մանուկ՝ աղքատության, իսկ 27.000-ը ծայրահեղ աղքատության մեջ է

ՀՀ վիճակագրական ծառայությունը հրապարակել է «Աղքատություն եւ սոցիալական պատկեր» ամենամյա զեկույցը, համաձայն որի, Հայաստանում ավելի քան 300.000 երեխա ապրում է աղքատության մեջ: Թիվը ամբողջ բնակչության 35.8 տոկոսն է կազմում: Ավելի քան 27.000 երեխա ծայրահեղ աղքատ են: Համաձայն զեկույցի՝ 4 եւ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներն ամենաաղքատն են: Այս ընտանիքներում աղքատության ընդհանուր մակարդակը մոտավորապես 71 տոկոս է, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 26.5 տոկոս:

Ըստ զեկույցի՝ հաշմանդամ երեխաները երկրորդ ամենախոցելի խումբն են կազմում: Նրանց 5 տոկոսն ապրում է ծայրահեղ աղքատության մեջ, իսկ 54 տոկոսը աղքատ է:

Երեկ Յունիսեֆը կոչ է արել կառավարությանը՝ հրատապ քայլեր ձեռնարկել մանկական աղքատությանն արձագանքելու ուղղությամբ: Կոչում Յունիսեֆի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Հենրիետ Արենսն ընդգծել է ընտանեկան նպաստների դերը, որոնք կարեւոր նշանակություն ունեն ծայրահեղ աղքատ եւ աղքատ ընտանիքների բարեկեցության հարցում: Չնայած բարելավված աջակցությանը՝ ընտանեկան նպաստները հասանելի չեն բոլոր նրանց, ովքեր դրանց մեծ կարիքն ունեն: Ներկայումս ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 67 տոկոսը եւ աղքատ ընտանիքների 26 տոկոսն են կանոնավոր ընտանեկան նպաստ ստանում:

Հ. Հ.

# Իսկ երբ «ընտրություն» կոչված հոգեկան ցունամին է մոտենում...

Քաղաքականության նկատմամբ, որպես թատերաբեմի, երբեւէ ընդգծված հետաքրքրություն եւ հետաքրքրասիրություն չեմ ցուցաբերել: Ոչ այն պատճառով, որ այն ինձ անհետաքրքիր էր... շատ, այլ հիմնականում այն, որ խնայել եմ ուղեղս անկանխատեսելի չափումներում ու կոստան-նստան գործակիցներով լպրծուն հարթություններում արբանյակելուց ու փորձարկելուց... Քաղաքականությունը, առանձնապես հայաստանյան, ինձ՝ սովորական մահկանացուիս, միշտ էլ ներկայացել է մո՜ւթ-մո՜ւթ սենյակում աչքակապուկի խաղալու հանգույն... Որպեսզի մեկնարկի նոտան հուսահատ կամ ծանր դրխկալեն չհնչի, հիշեմ. տարիներ առաջ ռուսական հեռուստատեսության հանրահայց «Կինոճանապարհորդությունների ակումբի» հանրահայտ Սենկեեւիչը Նիդեռլանդներում, արտաքին արիստոկրատ նկարագրով, ինչ որ գիտահետազոտական կառույցում աշխատող տարեց մի կնոջից փորձեց ճշտել, թե որքա՞ն է նա տեղյակ իր երկրի իշխող, կառավարող օղակներից: Կինը շատ հանգիստ, քիչ էլ զարմացած պատասխանեց. «Կներեք, իսկ նրանք գիտե՞ն իմ մասին, նրանք իրենց գործն են անում, ես՝ իմ»: Հիմա՝ վերջից գամ՝ մեր երկրում էլ նրանք չգիտեն մեր մասին, հե՜չ չգիտեն, մարզայիններիս՝ ընդհանրապե՛ս, բայց մե՞նք... Մենք այնպե՜ս գիտենք նրանց՝ օխտը պորտով, հարս ու փեսով, աներ-քենեկալով... Գիտենք ոչ որովհետեւ քաղաքականությունն ու քաղաքական այրերը (իմ հասկացածս՝ ուղեծիր որոնող սեռակիցներիս խնայեմ) մեր աչքի լույսն են կամ ապրում-շնչում ենք նրանցով, այլ որովհետեւ դաժան ու ծանր ենք ապրում, որովհետեւ միշտ ու մեկեն հասկանում ենք, «Հեղնար աղբյուրի» Վարոսի պես, որ... մի ողջ կյանք՝ ջան-հավեսհավաս-անքուն գիշերներ զուր անցավ... Զուր անցավ՝ գոնե կեցության արժանապատիվ մինիմումն ապահոված տեսնելու, մարդկային հարաբերություններում, քո չափանիշներով, մարդ մնալու իմաստով... Սա՝ էն վերեւներին, հասկանալի բան չեմ ասում, նրանց հասկացած «մարդկային հարաբերությունները» իմ ակնարկածի հետ աղերս անգամ չունեն... Քաղաքականությունը մեր... «սիրեկանն» է դարձել, որովհետեւ ձրի զբաղմունք է, զայրույթ վեկտորելու թիրախ, դեռ կանգուն լինելդ ինքդ քեզ համար հաստատագրելու... կախիչ, հացիվի ու բանիվի ճամարտակության լքյալ... Ավարայր... Իսկ հիմա, երբ «ընտրություն» կոչված հոգեկան ցունամին է մոտենում, քաղաքականությունից խուսելը նմանվում է անհույս փրկօղակ փնտրելուն, հիշեցնելուն, որ... էհեհե՜յ, մենք էլ այստեղ ենք... Բայց այդ պարագայում... աշխարհ տեսած ճայերն անգամ, ափ են փնտրում... Այսինքն՝ նախապես փնտրած-գտած են լինում...

Տխրերա՞նգ էր... Կենսախինդ կլիներ, եթե եկողը... ցունամի չլիներ, մենք էլ այն հընթացս, անցավ՝ քաղաքակիրթ հաստիք-նիդեռլանդցի այն կնոջ ասած՝ ամենքս մեր գործն անեինք...

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գորիս

# Առաջին 35 մասնավոր չափագրողները

Ի թիվս այլ փոփոխությունների՝ 2012-ի հունվարի 1-ից անշարժ գույքի կադաստրի համակարգում անշարժ գույքի հաշվառման (չափագրման) գործառույթը կմասնավորեցվի: Այսինքն՝ չափագրման աշխատանքները կիրականացվեն մասնավոր հատվածի համապատասխան որակավորում ստացած մասնագետները: Երեկ նրանցից 35-ին կոմիտեի նախագահի տեղակալ **Աշոտ Մուսայանը** հանձնեց ՀՀ տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) եւ հողաշինարարության գործունեության բնագավառներում առաջին որակավորման վկայականները: Նշված մասնագիտություններով որակավորում ստանալու համար կոմիտե էին դիմել 107 հայտատու, բայց եռօրյա քննությունները հաղթահարեցին վերոնշյալ 35-ը: Սակայն Աշոտ Մուսայանը հայտնեց, որ կոմիտեի կողմից պարբերաբար կտրվեն նոր հայտարարություններ, եւ ցանկացողները կարող են դիմել: Տեղեկացվեց նաեւ, որ արդեն իսկ կազմված է հայտատուների 2-րդ խումբը՝ 65 հոգի, որոնք շուտով քննություններ կհանձնեն:

Ա. Մ.

# «Վիվասել-ՄՏՍ»-ի եւ BirthLink-ի համատեղ նախագիծը Շիրակի մարզում

*Արդիական բժշկական սարքավորումներ նորածինների համար*

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերությունը BirthLink ՀԿ հետ համատեղ շարունակում է նորածինների խնամքի բարելավմանն ուղղված ծրագիրը: Այս անգամ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը այցելել է Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոց: Հիվանդանոցին տրամադրվել են ինտենսիվ թերապիայի ինկուբատոր, CPAP համակարգ եւ այլ տեխնիկական սարքավորումներ, ինչը բժշկական անձնակազմին թույլ կտա հիվանդ նորածինների խնամքն ապահովել արդիական սարքավորումներով:

Բոլոր ծննդատներն ունենում են անհրաժեշտ սարքավորումների կարիք՝ բարդ հղիության կամ վաղաժամկետ ծննդաբերությունների դեպքում նորածինների կյանքը փրկելու համար: Այդ սարքավորումներն օգնում են պահպանել երեխայի մարմնի ջերմաստիճանը եւ կայունացնել նրա վիճակը մինչեւ տարածաշրջանային կենտրոն կամ Երեւան տեղափոխելը: Կյանքի ցնցում ունեցող երեխաներին անհապաղ եւ պատշաճ խնամք ցուցաբերելու դեպքում կրճատվում է բժշկական հետագա միջամտության հավանականությունը:



«Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանում մանկական մահացության մակարդակն ավելի քան չորս անգամ գերազանցում է այնպիսի երկրների տվյալները, ինչպիսիք են ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան: Որպես կորպորատիվ պատասխանատու կազմակերպություն, որը մեր երկրի կենսական նշանակություն ունեցող ոլորտների զարգացումը միշտ պահել է ուշադրության կենտրոնում, «Վիվասել-ՄՏՍ»-ը չէր կարող անտարբեր մնալ նման անհանգստացնող վիճակագրության հանդեպ», ասել է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: «Մենք չէինք կարող ուղղակի դիտորդի դերում լինել եւ սկսեցինք համագործակցել BirthLink ՀԿ-ի հետ: Մենք եւս մեկ անգամ պատգուցեցինք, որ հավատը եւ խնդրին հետեւողական մոտեցումը անպատճառ դրական արդյունք են տալիս: Այսօր արդեն մասնագետներն արձանագրում են դրական միտում. Հայաստանում նորածնային մահացության ցուցանիշն էականորեն կրճատվել է՝ այս ծրագրի շրջանակներում ծննդատներին տրամադրած սարքավորումների եւ բուժանձնակազմի համար կազմակերպված դասընթացների շնորհիվ: Շուտով մենք կունենանք պաշտոնական տվյալներ եւ կկարողանանք ավելի հստակ վիճակագրություն ներկայացնել», ավելացրել է ընկերության գլխավոր տնօրենը:

Շիրակի մարզի յոթ ծննդատներում ամեն տարի գրանցվում է շուրջ 40000 ծնունդ: Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոցը նորածիններ է ընդունում ողջ տարածաշրջանից: Երկար ճանապարհ անցնելու եւ մինչեւ Երեւան հասնելու փոխարեն ավելի նպատակահարմար է մանուկներին տեղափոխել մարզային հիվանդանոց: Այս առումով կարեւոր է հիվանդանոցն անհրաժեշտ բոլոր սարքավորումներով ապահովելը, ինչը թույլ կտա առավելագույն արագությամբ երաշխավորել նորածինների մասնագիտացված խնամքը:

Սկսած 2010 թ.-ից, համատեղ նախագծի շրջանակներում՝ «Վիվասել-ՄՏՍ»-ն եւ BirthLink ՀԿ-ն աջակցում են Շիրակի մարզի հիվանդանոցներին: Ավստրիական մանկական հիվանդանոցին 2010 թ.-ին եւս տրամադրվել է նորածինների խնամքի համար անհրաժեշտ բուժտեխնիկա (CPAP շնչառական համակարգ, ինտենսիվ թերապիայի համակարգ, տաքացվող ներքնակներ, հիվանդի ախտորոշման մոնիտորներ, օդափոխիչ եւ այլ սարքավորումներ):

Հայաստանում 2009 թ.-ին CPAP համակարգի ներդրումը էական ազդեցություն ունեցավ վաղաժամ ծնված մանուկների կյանքը փրկելու գործում: Վաղաժամ ծնված մանուկների բուժման այս ձեւը վերջին տասնհինգ տարիների ընթացքում լայնորեն կիրառվել է Եվրոպայում եւ ԱՄՆ-ում: Այս նախաձեռնության շնորհիվ, Հայաստանում ծնված երեխաները եւս ստանում են անհրաժեշտ աջակցություն:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

# Սարգսյան-Ալիեւ մոտակա հանդիպում՝ համանախագահների կոչով ու Ադրբեջանի «բազմագլուխ» ղեկավարության ապակողմնորոշված դրսեւորումներով

Ղարաբաղյան գործընթացում հնարավորությունների տարբեր «պատուհաններ» բացվում ու փակվում են, գործընթացն էլ առաջ չի գնում, բայց մեկ հարցում ամենայն հստակությունն արդեն ակնհայտ է. ժամանակն է իրերն իրենց անուններով կոչելու, նշելու բոլոր կոչերի ու հայտարարությունների կոնկրետ հասցեատերերին, ինչպես նաեւ խստորեն արձագանքելու շփման գծի բոլոր այն միջադեպերին, որ մարդկային զոհերի պատճառ են դառնում:

Կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցման «ժամանակի» գալուն զուգահեռ ձեւավորվել է առավել լարվող իրավիճակը որեւէ կերպ հարթելու հրամայական: Բայց չնայած այս ամենին, միջնորդները թեեւ քիչ-քիչ մեծացնում են մտահոգության ու «քննադատության» չափաբաժինն իրենց հայտարարություններում, սակայն իրական գնահատականները, լավագույն դեպքում, հնչում են կուլիսներում:

Դեկտեմբերին ծրագրված ԵԱՀԿ նախարարների խորհրդի 18-րդ նստաշրջանն ավարտվեց, սակայն մինչ այդ արդեն դեկտեմբերի 6-ին ամբողջացվեց ամենն, ինչ թերեւս նախատեսել էին ու իրականացրին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները՝ ի դեմս համանախագահներ Ռոբերտ Բրադկեի, Բեռնար Ֆասիեի եւ Իգոր Պոպովի:

Ամենից առաջ, դա խմբի հերթական, բայց ավելի բարձր մակարդակի՝ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի, Ֆրանսիայի ԱԳ եվրոպական հարցերով նախարար Ժան Լեոնետիի, Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի հնգակողմ հայտարարությունն էր, որ արվեց դեկտեմբերի 6-ին Վիլնյուսում:

Նախ, հայտարարությամբ վերահաստատվում է «ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հասնելու կարեւորությունը»: Ռազմատենչության ու ռազմական գործողությունների անցնելու հիստերիայի հեղինակ չի նշվում, բայց շեշտվում է, որ Մինսկի խմբի համանախագահողների վերահաստատմամբ՝ «Լեռնային Ղարաբաղի հակամարտության համար ռազմական լուծում լինել չի կարող եւ ՄԱԿ-ի կանոնադրությունը, Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներն ու 2009-ին Լ'Աքվիլայի եւ 2010-ին Մուսկոկայի նախագահների համատեղ հայտարարությամբ նշված տարրերը բոլոր կողմերին ուղի են առաջարկում անցնելու անընդունելի ստատուս քվոյից եւ հասնելու խաղաղ կարգավորման»:

Պատերազմ վերսկսելու ադրբեջանական «զեղումները» չդատապարտելով, բայց ամեն խնդիր առավել հստակ ու ընդգծված ձեւակերպելով հանդերձ՝ հայտարարությունը, որին համաձայնություն ու մասնակցություն ունի նաեւ Ադրբեջանը, նախ շեշտում է, որ բոլորը համաձայնել են «շարունակել բանակցային գործընթացը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափում...»: Սա էլ նույն Ադրբեջանին ուղղված հիշեցում է, որ ձեւաչափը փոխելու ցանկությունն ու իրողությունները միմյանց չեն համընկնում:

Հնգակողմ հայտարարությունը նաեւ տեղեկացնում է, որ բոլորը համաձայնել են հետագա ջանքերն ուղղել հրադադարի խախտումների հետաքննական մեխանիզմների դետալները հստակեցնելու ուղղությամբ, նաեւ ափսոսանք հայտնելով, թե հիմնարար սկզբունքներն ամբողջացնելու դովիլյան հայտարարության կոչը «կողմերն ունակ չեն գտնվել կատարելու՝ այդ որոշիչ քայլը»:

Այսուհանդերձ, կարծես Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպում, այնուամենայնիվ, նախապատրաստվում է, թեեւ Բաքվից հնչող մեկնաբանությունները ոչ մի դրական բան չեն կարող խոստանալ: Վիլնյուսյան հայտարարությունը տեղեկացնում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները տեղեկացրել են, որ «իրենց նախագահները պատրաստ են հանդիպել մոտակա ապագայում՝ համանախագահող երկրների հովանու ներքո շարունակելու իրենց անմիջական երկխոսությունը, վերջին շրջանի փորձառությամբ հստակեցնելու, թե ինչպես խաղաղություն, կայունություն ու բարեկեցություն բերեն իրենց ժողովուրդներին»:



### Մամեդյարովի ստորագրածը Ալիեւի գրասենյակից «սխալ են հանում»

Ոչ այնքան տրամաբանական, որքան անհրաժեշտ շարունակություն կարելի է դիտել նախագահների մակարդակով հանդիպման պատրաստակամությունը, սակայն ադրբեջանական կողմի արձագանքների ֆոնին տարակուսելի է, թե Մամեդյարովն այդ երկրում իրապե՞ս արտգործնախարար է, թե՞ ոչ: Մամեդյարովը, չնայած միանգամից խաղաղ համաձայնագրին անցնելու միտքն առաջ մղելուն, հնգակողմ հայտարարությամբ պատրաստակամության մասին խոսել է, նաեւ ԵԱՀԿ նախարարական խորհրդում նշել, թե «միջազգային նորմերի շրջանակներում Ադրբեջանը պատրաստ է փոխզիջումների»:

Հստակ է, թե Մամեդյարովի պատկերացմամբ, ինչ է նշանակում «միջազգային նորմերի շրջանակներում». բայց եւ այնպես, այս ամենն ասվել է ԵԱՀԿ մասնակից երկրների արտգործնախարարների ներկայությամբ, ասել է թե չի կարող ուշադրության չարժանանալ այն դեպքում, երբ հենց Բաքվից տրամագծորեն հակառակ հայտարարություններ են արվում, հարցականի տակ դնելով այդ երկրում պաշտոնների աստիճանակարգմամբ բացատրվող պնդումների իրական նշանակությունը:

Այն ժամանակ, երբ Մամեդյարովը համաձայնում է հնգակողմ հայտարարության մեջ նշվող՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափի անփոփոխելի լինելուն, Ադրբեջանի նախագահի աշխատակազմից տարբեր չինովնիկներ այլ տեսակետներ են հնչեցնում, մասնավորապես, նաեւ դժգոհելով ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափից, անգամ քննադատելով:

Նույն կերպ, Մամեդյարովը Վիլնյուսում համաձայնում է «ռազմական լուծում» չլինելու ձեւակերպմանը հայտարարության մեջ այն դեպքում, երբ Ադրբեջանից ղարաբաղյան թեմայի մասին դատարկախոսողներից մեկն էլ խոսում է «ադրբեջանական ժողովրդի համբերության բաժակը լցվելու» մասին: Ստացվում է, որ հարեւանները նույն տեսակետը չունեն, հասնում են Եվրոպա, ստորագրում տարբեր հայտարարություններ ու պատրաստակամություններ մերժելու անզորությամբ, իսկ հենց Ադրբեջանից հոխորտանքն ու կուրծք ծեծելը շարունակվում է:

Ինչպես ասում են, կողմնորոշվեք վերջապես...

### Հայաստանը կողմ է Լավրովի կոչին

Ադրբեջանը Հայաստանի ապակառուցողականության մասին է խոսում, շարունակելով ապակառուցողական հայտարարություններ ու քայլեր անել: Հայաստանն այդ նույն ժամանակ ողջունում է հակամարտության կարգավորմանն ուղղված ջանքերն ու դրական արձագանքում կոչերին: Վիլնյուսյան հավաքում ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը Հայաստանին եւ Ադրբեջանին կոչ է արել օգտագործել «նախագահ Մեդվեդեւի նախաձեռնությամբ վերջին երկու տարիներին շփումներով մշակված առաջարկությունները»:

Մասնավորապես, ինչպես տեղեկացնում է Ինտերֆաքսը, Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Լավրովի կոչին դրական է արձագանքել, ողջունելով Մեդվեդեւի նախաձեռնությամբ անցկացված հանդիպումներում մշակված առաջարկներն օգտագործելու առնչությամբ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Orange-ը մեկնարկում է համագործակցություն ՀՊՃՀ Գյումրու եւ Վանաձորի մասնաճյուղերի հետ

Orange-ը համագործակցության ծավալուն ծրագիր է սկսում ՀՊՃՀ Գյումրու եւ Վանաձորի մասնաճյուղերի հետ: Համալսարանների հետ կնքված համաձայնագրերի շրջանակներում երկու համալսարանների ուսանողները կկարողանան մասնագիտական պրակտիկա անցնել Orange-ում, իսկ Orange-ի աշխատակիցները մասնագիտական եւ վերապատրաստման դասընթացներ կիրականացնեն ուսանողների համար:

«Բոլորս էլ գիտենք, որ կարիերայում ամենադժվարն առաջին աշխատանքային փորձն է: Ավելի դժվար է, երբ չես բնակվում մայրաքաղաքում: Երջանիկ ենք սկսել այս համագործակցությունը երկու համալսարանների հետ, քանի որ կարծում ենք, որ Հայաստանը ոչ միայն Երեւանն է, այլեւ բոլոր մարզերը՝ մեծ ու փոքր բնակավայրերով, եւ մարզային ուսանողները պետք է ունենան նույնպիսի հնարավորություններ, ինչ երեւանցիները: Հուսով եմ, որ մեր համագործակցությունը երկարատեւ ու արդյունավետ կլինի», ասաց Orange Արմենիա ընկերության գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղում նաեւ տեղի ունեցավ անվճար Wi-Fi անկյան պաշտոնական բացումը, որի շնորհիվ բուհի ուսանողներն ու դասախոսները կկարողանան օգտվել իրենց բուհի ամենամարդաշատ վայրում տեղադրված անվճար Orange wi-fi ինտերնետից:

Երկու համալսարանների հետ համագործակցությունն այսքանով չէր սահմանափակվում: Ընկերությունն իր բարեգործական կառույցի՝ Orange հիմնադրամի միջոցով համալսարաններից յուրաքանչյուրին փոխանցեց մեկ միլիոն դրամ, որը պետք է հատկացվի արդեն ընտրված 15 ուսանողների ուսման վարձի մարմանը: Ուսանողներն ընտրվել են համալսարանների առաջարկով, հիմնվելով երկու հիմնական չափանիշների վրա. ուսանողի ընտանիքի սոցիալական վիճակ եւ առաջադիմություն:



## Արթուր Բաղդասարյանը հանդիպել է իր ֆրանսիացի գործընկերոջը

**Աշխատանքային այցով Ֆրանսիայի Հանրապետությունում գտնվող ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը հանդիպել է ֆրանսիացի իր գործընկերոջ՝ Ֆրանսիայի Ազգային անվտանգության եւ պաշտպանության խորհրդի գլխավոր քարտուղար Ֆրանսիս Դելոնի հետ: Կողմերը երկուստեք շեշտել են, որ հայ-ֆրանսիական բարեկամությունը հիմք է տարբեր ոլորտներում փոխգործակցությանն առավել մեծ թափ հաղորդելու համար եւ այս համատեքստում ընդգծել են երկկողմ հանդիպումների կարեւորությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել մի շարք ուղղություններով խորացնելու համագործակցությունը անվտանգության եւ պաշտպանության ոլորտներում:**

**Այցի շրջանակներում Արթուր Բաղդասարյանը հանդիպել է նաեւ Ֆրանսիայի տրանսպորտի եւ բնապահպանության նախարար Տիերի Մարիանիի եւ Օդեսենի դեպարտամենտի խորհրդի նախագահ Պատրիկ Դեւեջյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է հայ-ֆրանսիական համագործակցության խորացմանն առնչվող հարցերի լայն շրջանակ:**

**Արթուր Բաղդասարյանը հանդիպել է նաեւ Արտերկրում ֆրանսիական կրթական հաստատությունների գործակալության գլխավոր տնօրեն Անն Մարի Դեկոտի հետ: Երկու երկրների միջեւ կրթության ոլորտում համագործակցության հետագա խթանմանն առնչվող հարցերի թվում քննարկվել են նաեւ Հայաստանում ֆրանսական լիցեյի հիմնադրմանը վերաբերող հարցեր:**

## «Մարդ ու կին՝ նույն հանգին»

**ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ, հիմա էլ Ադրբեջանում ԱՄՆ-ի շահերը ներկայացնելու կոչված Մեթյու Բրայզան քանիցս է իր անպատեհ կամ անընդմեջ հերքվող հայտարարություններով ղարաբաղյան հակամարտության առնչությամբ ջուր պղտորել: Դեսպան նշանակվելուց հետո էլ Բրայզան համանախագահի «փոշուց» չի ազատվել. ԼՂՀ հարցից հա խոսում է, հա մեկնաբանում:**

**Հերթական անգամ էլ, ադրբեջանական կայքէջերի տեղեկացմամբ, Բրայզան հայտարարել է, թե հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցումը «լիովին հաղթահարելի խնդիր է»: Ընդ որում, այդ համաձայնության համար կան որոշ «առանձնահատուկ տարրեր, որոնց լուծումը հակամարտության կողմերից փոխադարձ վստահություն է պահանջում»: Բրայզան էլ իր հերթին է ակնհայտ դարձրել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ջանք չեն խնայում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում կազմակերպելու համար: Այդ առնչությամբ Բրայզան հույս է հայտնել, թե այդպիսի հանդիպում տեղի կունենա մոտ ապագայում:**

**Ադրբեջանական իրականության սեփական մեկնությունների ու դատողությունների մասով հանրությանը ներկայանալու առիթներ բաց չի թողնում նաեւ Բրայզայի կինը՝ Զեյնո Բարան-Բրայզան, ասել է թե Բրայզաների ընտանիքի համար այս տարածաշրջանը առօրյա թեմա է: Մասնավորապես, տիկին Բրայզան էլ երեկ Բաքվում ներկայացրել է իր նոր գիրքը՝ «Քաղաքացին իսլամում», ադրբեջանցի լրագրողներին տեղեկացնելով, թե գրքում ներկայացված է նաեւ «1918-ին Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության ստեղծման՝ որպես մուսուլմական Արեւելքում առաջինի փաստը»:**

**Շատ ուշագրավ դիտարկում է... Ադրբեջանն, այն էլ՝ ժողովրդավարական:**

**Ա. Հ.**

## Դեմքեր

# Բացահայտված արդարություն

Վերջերս Մոսկվայում «Էկսմո» հրատարակչությունը լույս է ընծայել Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի երեք հատորների նորագույն տպագրությունը, գիտական նոր ապարատով, շքեղ ձեւավորմամբ եւ հարուստ հավելվածներով: Այս հրատարակությունն առաջինն է Խորհրդային Միության փլուզումից հետո եւ նշանավորվում է նրանով, որ, ի տարբերություն հիշյալ ժամանակաշրջանի շուրջ 70-ամյա ստանդարտ հրատարակությունների, այստեղ, բուն «Կապիտալ»-ից բացի, տեղ են գտել ե՛ւ հեղինակի տարբեր ժամանակների տնտեսագիտական ձեռագրերն ու երկերը, ե՛ւ Մարքսից առաջ ու հետո ապրած հեղինակների աշխատություններն ու մշակումները կապված «Կապիտալ»-ում քննարկվող պրոբլեմների հետ:

Վերջին պարագայի շնորհիվ ներկա «Կապիտալ»-ը դիտարկվում է ոչ վերջին տասնամյակների քարացած պատմահայացքով՝ իբրեւ սխոլաստիկ ելակետ կամ վերջնակետ, որից մեկնում ու որին հանգում էին էպիգոն հեղինակները, այլ միանգամայն նորովի՝ իր էվոլյուցիոն զարգացման դիտակետից, որպես մշակման ու կատարելագործման ենթակա խնդիրների մի կարեւոր օղակ տնտեսագիտական մտքի պատմության համընդհանուր միջավայրում:

Նշված հանգամանքը սույն հրատարակության անկապտելի գիտական արժանիքն է:

Մեզ՝ հայերիս համար նոր տպագրությունն ուրախալի է նրանով, որ այստեղ գիտնականներ Տուգան-Բարանովսկու, Բոգդանովի, Կոնդրատեւի, Սլոնիմսկու, Բունիաթյանի, Գերցենշտեռնի, Սլուցկու, Խարազովի, Բորտկեւիչի, Սորվինի, Մաեւսկու եւ այլոց կողքին ամենամեծ տեղ՝ մի առանձին գլուխ (ինչպես ոչ մի այլ հեղինակի), հատկացված է մեր հայրենակից Թադեոս Ավդալբեգյանի տնտեսագիտական ժառանգությանը: Դեռեւս առաջին հատորի վերջում հրատարակության կազմող եւ գիտական վաստակաշատ խմբագիր Պ. Ն. Կլյուկինը հայտարարում է, որ «Երկրորդ հատորի նյութին առնչվող՝ Ռիկարդոյի, Կենեի աշխատությունների շարքում ներառված է տաղանդավոր տնտեսագետ եւ «Կապիտալ»-ի հայերեն միանձնյա թարգմանիչ Թադեոս Ավդալբեգյանի ակնարկների ընտրանին, որոնցում զարգացված են Մարքսի հասարակական վերարտադրության սխեմաները»:

Եվ ահա երկրորդ հատորի 1/7-րդ մասը՝ 1197 էջերից 170-ը, «Վերադարձված անուններ» ռուբրիկայով, լուսանկարով եւ անձնական ստորագրությամբ (դարձյալ ինչպես ոչ մի այլ հեղինակի), նվիրված են Ավդալբեգյանի վերարտադրության թեորիայի ակնարկաշարին, վերարտադրության տասնյակ սխեմաներին, տնտեսագիտական երկերի գրախոսականներին եւ հանրագիտարանի համար գրված ինքնակենսագրությանը՝ լրացված հետագա տվյալներով:

Ինչո՞վ բացատրել այսպիսի աննախադեպ պատվավոր տեղ հատկացնելու հանգամանքը:

Խորհրդային կարգերի քաղաքական պաստառի վերացումից հետո ներկայիս ռուսական եւ միջազգային մարքսիզմի համապատասխան մարմիններին տեղեկացվել էր, որ 20-30-ական թվականներին Հայաստանում գործող տնտեսագետ Թադեոս Ավդալբեգյանի երկերում լրացվել են «Կապիտալ»-ում թերի մնացած Մարքսի կազմած սխեմաները եւ մարքսիստական վերարտադրության թեորիան այստեղ մշակվել է այնպիսի մակարդակով, ինչպես ուսմունքի գիտակարգերից քչերը:

Հաղորդված տեղեկությունները դարձել էին կատարյալ հայտնություն, որովհետեւ համընդհանուր տարածված կարծիք կար, որ անավարտ սխեմաներն այդպես էլ մնացել են անավարտ: Մանավանդ հայտնի է, որ լրացված սխեմաների ապարդյուն որոնումները Մարքսի ձեռագրերում սկսվել էին դեռեւս Էնգելսից, իսկ լրացման բոլոր փորձերը խոշորագույն տնտեսագետների կողմից հանգեցրել էին սոսկ այլեւայլ շեղումների: Էլ չենք ասում վերարտադրության ընդհանուր թեորիայի ստեղծման մասին հայտնությունը, որ հասկանալի պատճառներով մատնված էր եղել երկարատեւ լռության:

Ահա այս իրողությունները համապատասխան քննարկումներից հետո սկզբից արձագանքվեցին միջազգային մեծ հեղինակություն վայելող հիմնարկների՝ մասնավորապես Գերմանիայի MEGA (Marx-Engels Gesamtausgabe) ակադեմիական հրատարակության մեջ, այնուհետեւ Ճապոնիայում գործող մարքսիստական կազմակերպություններից մեկի պարբերական հրատարակության մեջ եւ այլուր, որոնք, ի վերջո հանգեցրին Ավդալբեգյանի տնտեսագիտական վաստակի արժանի գնահատականին եւ նրա պատմական անժխտելի դերի ճանաչմանը:

Իբրեւ հետեւանք այս ամենի՝ «Կապիտալ»-ի նորագույն հրատարակությունն ահա ռուսերեն լույս է ընծայվել Թադեոս Ավդալբեգյանի վերարտադրության թեորիայի եւ գրախոսականների հավելումով:

Այս իրադարձությամբ բացահայտվել է 80 տարվա կորսված արդարություն:

Նման պարագաներում հիշյալ հրատարակություններին առնչվող մասնագետների համար դժվար չէր կռահել Ավդալբեգյան-տնտեսագետի թարգմանած հայերեն «Կապիտալ»-ի առանձնահատուկ գիտական արժեքն՝ ի տարբերություն շատ լեզուներով կատարված թարգմանությունների, բայց դեռեւս անհայտ է եղել վերջինիս նաեւ թարգմանական եզակի լինելը: Պատահական չէ, որ Պ. Ն. Կլյուկինի վերոբերյալ հայտարարության մեջ թարգմանչի մասին խոսելիս հատուկ շեշտված է «միանձնյա» բառը, որովհետեւ համաձայն «Կապիտալ»-ի թարգմանությունների պատմության տվյալների՝ այս խնդրի իրագործման համար այլ լեզուներով, միավորվել են խմբեր ու հիմնարկներ, ներգրավվել են մասնագետներ ու խորհրդատուներ տարբեր բնագավառներից, եւ հանկարծ պարզվել է, որ աշխարհիս ավելի քան 50 լեզուներով կատարված թարգմանություններից միայն շվեդներն ու հայերն ունեն՝ ա) գերմաներեն բնագրից կատարված, բ) ամբողջական՝ 3 հատոր, 4 գիրք «Կապիտալ»-ի, գ) անդրանիկ թարգմանության, դ) միանձնյա թարգմանիչ, այսինքն՝ մաքսիմալ արդյունք՝ մինիմալ պայմաններում, անհատական իրագործմամբ:

Այսպիսի ցուցանիշներով օժտված չէ ուրիշ ոչ մի թարգմանություն նշված երկուսից բացի:

Բայց հայերեն «Կապիտալ»-ը գերազանցում է իր շվեդերեն երկվորյակին թարգմանության գիտական նախադրյալներով՝ սկսած թարգմանչի մասնագիտական մակարդակից եւ, ի տարբերություն շվեդերեն թարգմանության, որ կատարված է Կաուցկու խմբագրած ժողովրդական հրատարակությունից՝ հայերենը թարգմանված է Էնգելսի գիտական՝ ավելի բարդ խմբագրությունից:

Ահա այս լրացուցիչ պահանջներով հայերեն «Կապիտալ»-ն իրոք դառնում է եզակի:

Սակայն հայերիս համար հիշյալ ցուցանիշներից ավելի, կարեւորագույնը՝ ազգային գիտամշակույթի դարակազմիկ նշանակության պարագան էր, եւ դժվար է մատնանշել այլ օրինակ, որ մեկ անգամից մի քանի գիտակարգերի՝ տնտեսագիտության, հասարակագիտության, պատմագիտության, փիլիսոփայության, քաղաքագիտության եւ այլոց որակական թռիչքի նմանօրինակ խթան եղած լինի եւ մանավանդ մայրենի լեզվի շրջադարձային դեր կատարած լինի, ինչպես «Կապիտալ»-ի հայացումը: Առանց չափազանցության՝ հենց այս առթիվ կերտվեց հայերեն գիտական լեզու, ստեղծվեց համակարգված տնտեսագիտական տերմինաբանություն եւ անցկացվեց տերմինաբանական ռեֆորմ, այն դնելով «Կապիտալ»-ի բնագրի՝ գերմաներենի հիմքի վրա:



*Թադեոս Ավդալբեկյան*

Ավդալբեգյանի կազմած տնտեսագիտական տերմինների բառարանը, որի ակունքը «Կապիտալ»-ն էր, պարունակում է մոտ 30 000 բառ ու արտահայտություն, եւ կարեւոր է, որ, ի տարբերություն այլ ազգերի, որոնք, չունենալով սեփական լեզվով տնտեսագիտական տերմինաբանություն, ստիպված օգտվում են համաեվրոպական տերմինաբանությունից, հայերս ունենք մայրենի լեզվով տնտեսագիտական ընտիր տերմինաբանություն: Օրինակ՝ ռուսերեն сертификат, дивидент, экспроприация, патент, акционер, соло-вексель տերմիններից ոչ մեկը ռուսերեն բառ չէ, այնինչ նշված հասկացությունների հայերեն տերմինները՝ հավաստագիր, շահութամաս, ունեզրկում, արտոնագիր, բաժնետեր, մենամուրհակ, զուտ հայերեն բառեր են: Այսպիսի տերմինների թիվը «Կապիտալ»-ում հազարների է հասնում: Բացի դրանից՝ որոշ տերմիններ, որոնք մեր գործածության մեջ մտան շուկայական հարաբերությունների անցնելուց հետո, ինչպիսիք՝ депозит, инвестиция եւ այլք, հայերեն թարգմանվել էին դեռեւս «Կապիտալ»-ում:

Ավդալբեգյանի շնորհիվ թարգմանվեցին նաեւ Մարքսի՝ տարբեր հեղինակներից մեջ բերած հազարավոր քաղվածքները, հին ու նոր լեզուներից կատարված, զարմանալի հնարանքներով հայոց բառ ու բանի մեջից կցվեցին բնագրին համարժեք արտահայտություններ եւ գերմաներեն կենդանի լեզվի համապատասխան իդեոմներ, իսկ գեղարվեստական գրականության արձակ եւ չափածո նմուշներից ոմանք՝ մասնավորապես Շեքսպիրն ու Սոֆոկլեսը, գերադասելի են «Կապիտալ»-ում դրված Ավդալբեգյանի թարգմանությամբ, քան բուն երկերում:

Թարգմանիչն իր առջեւ ծառացած խնդիրը բնութագրել է հետեւյալ խոսքերով.

**«Հինգերորդ դարից հետո դեռ երբեք հայ թարգմանչական գրականության հանդեպ այսպիսի հսկայական ու փիթխարի խնդիր չէր դրված»,** իրավացիորեն գրել է նա:

Այսօր մեզ հայտնի է, որ հինգերորդ դարից, այսինքն՝ հայերեն գրերի գյուտի ժամանակաշրջանից սկսած «Կապիտալ»-ը հայերեն լեզվով երբեւէ գրված գրքերից լավագույններից է, ինչպես ժամանակին պատկերավոր ասվել է՝ «հայերեն «Կապիտալ»-ը հայերենի կապիտալ է», որով եւ մարմնավորվել է հայերեն գիտական գրականության թարգմանության գլուխգործոցը, կազմելով մի սքանչելի եռապսակ հոգեւոր եւ գեղարվեստական թարգմանական գլուխգործոցների հետ.

**Աստվածաշունչ, Շեքսպիր ու «Կապիտալ»:**

Հետեւապես յուրաքանչյուր հայ ընտանիքի գրադարակում «Կապիտալ»-ը պետք է ունենա իր արժանավոր տեղը որպես հայոց լեզվի նմուշահատ գանձարան, անկախ մարքսիզմի նկատմամբ եղած վերաբերմունքի, ինչպես հայերեն Աստվածաշունչը՝ անկախ հավատացյալ լինել կամ չլինելուց:

Առիթը պատեհ է, որ Ավդալբեգյանի պատմատնտեսագիտական մեծարժեք երկերը, որոնք վերաբերում են Հայաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի, Մերձավոր Արեւելքի երկիրների աշխատավարձերի, հարկերի, շարժական ու անշարժ գույքի գների հարցերին եւ ժամանակագրորեն ընդգրկում են V-XIX դդ. ստվար ժամանակաշրջանը, թարգմանվեն օտար լեզուներով եւ դառնան միջազգային գիտական հանրության սեփականությունը:

Այս հարցով հրավիրում ենք ՀՀ ԳԱ նախագահության եւ Տնտեսագիտության ինստիտուտի գործուն ուշադրությունը:

Բացահայտված արդարությունը պետք է շարունակի իր հաղթարշավը:

Խմբ. կողմից.- **Հիշեցնենք, որ Թ. Ավդալբեկյանն էլ 1937 թ.-ին զոհ գնաց Ստալին-Բերիա դահիճների մահավճռին:**

**Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ**
**Մոսկվա**

## ՄԱՐՍԵԼ

# Հայաստանը՝ Եվրոպայի հատուկ հյուր

2012թ. ապրիլին հերթական ընտրություններին նախապատրաստվող Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի հրավերով Մարսելում սկսվեց Եվրոպայի Ժողովրդական կուսակցության (European People's Party (EPP)) 20-րդ համաեվրոպական կոնգրեսը: Ինչպես ավելի վաղ հայտնել էր Panorama.am-ը, այս երկօրյա համաժողովին հատուկ հյուրի կարգավիճակով հրավիրված է նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի «Ազգային Շարժում Միավորում» կուսակցության, կամ UMP-ի, եւ ԵԺԿ-ի նախագահ Վ.Մարտենսի հովանավորությամբ անցկացվող այս հավաքը, ինչպես սպասվում է, կընդունի «Առաջ տանելով Եվրոպան» փաստաթուղթը, եւ այս առիթով Մարսել են հրավիրվել նաեւ ԵՄ Արեւելյան գործընկերության առավել հաջողակ երեք պետությունների ղեկավարները՝ Սերժ Սարգսյանը, Միխեիլ Սաակաշվիլին եւ Վլադ Ֆիլատը (Մոլդովա):

Կոնգրեսը մասնակիցների առումով իրոք ներկայացուցչական է՝ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուից մինչեւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկել եւ Իսպանիայի նորընտիր վարչապետ Մարիանո Ռախոյ:

Հայաստանի ներկա խորհրդարանում ներկայացված գրեթե բոլոր կուսակցությունները (բացառությամբ Սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ ՀՅԴ-ի) հայտ են ներկայացրել աջ կենտրոնամետ կուսակցությունների միավորում հանդիսացող ԵԺԿ-ին անդամակցելու համար, սակայն վերջնական որոշում՝ այս պահի դրությամբ դեռեւս չի հրապարակվել:

Ս.թ. մայիսի 10-ին Երեւանում վարչապետ Տ.Սարգսյանի հետ հանդիպման ընթացքում ԵԺԿ նախագահ Վ.Մարտենսը դրական էր արտահայտվել 2008-ի ընտրություններից հետո երկրի քաղաքական եւ քաղաքացիական դաշտի բարեփոխումներին եւ ազատականացմանը ուղղված քայլերը, նշելով, որ «ընտրական օրենսգրքի վերաբերյալ բարեփոխումները խոսքի, միավորումների ազատության նաեւ կոռուպցիայի դեմ պայքարը ապացուցում են, որ կառավարությունը կամք է դրսեւորում այդ բարեփոխումներն իրենց ավարտին հասցնելու հարցում»: Արդեն նոյեմբերի 8-ին՝ դիմելով ԵԺԿ քաղաքական ասամբլեային Բրյուսելում վարչապետ Տ.Սարգսյանը խոսել էր Հայաստանում հայտարարագրված արժեքների եւ օսմանյան ու խորհրդային կայսրությունների թողած իրականության միջեւ առկա տարբերությունների մասին, հույս հայտնելով, որ Եվրոպայի օգնությամբ Հայաստանը կարող է հաղթահարել այդ անդունդը նույնպես:

Արդյունքում՝ ԵՄ-ի հետ տնտեսական եւ քաղաքական ինտեգրումն առավել զարգացնելու ռազմավարության մասին բարձրաձայնող երկրի նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցում է համաեվրոպական հիմնական քաղաքական կուսակցության համագումարին, իսկ այսօր ներկաներին է դիմելու առանձին ելույթով:

*panorama.am*

# Հ. Քլինթոն. «Սիրիան պետք է լինի ազատ պետություն»

## *ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի դեսպանները վերադարձել են Դամասկոս*

ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնը Ժնեւում հանդիպում է ունեցել սիրիական ընդդիմության ներկայացուցիչների հետ, որպեսզի ծանոթանա նրանց ժողովրդավարական բարեփոխումների ծրագրերին՝ ի դեպս նախագահ Բաշար Ասադի վարչակարգի տապալման: Ընդդիմադիրներն ապրում են եվրոպական տարբեր երկրներում եւ ներկայացնում են սիրիացիների Ազգային խորհուրդը: Այդ կազմակերպությունը պահանջում է Ասադի պաշտոնաթողությունը եւ հրաժարվում է բանակցել նրա հետ:

Հ. Քլինթոնը ընդդիմադիրներին կոչ է արել չմոռանալ, որ ժողովրդավարությունը նշանակում է առաջին հերթին օրենքի իշխանություն: Ընդսմին նա հայտարարել է, որ Սիրիան «պետք է լինի ազատ պետություն»: Նրա խոսքերը մեջբերում է Ֆրանսպրես գործակալությունը:

Նաեւ հայտնի է դարձել, որ Դամասկոս է վերադարձել ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Ֆորդը, որն այնտեղից հեռացել էր հոկտեմբերին: Դիվանագետը 1,5 ամիս Վաշինգտոնում էր, ուր նրան կանչել էին խորհրդակցության նպատակով:



Պատճառը դեսպանին Սիրիայում հասցեագրված բազմաթիվ սպառնալիքներն էին: Սեպտեմբերի վերջերին սիրիացիների մի խումբ հարձակվել էր ԱՄՆ-ի դեսպանի եւ նրա աշխատակիցների ավտոշարասյան վրա: Հարձակումը տեղի էր ունեցել հակակառավարական տրամադրություններ ունեցող սիրիական քաղաքներ նրա կատարած ուղեւորությունից հետո: Այդ ուղեւորության ժամանակ Ֆորդը ԱՄՆ-ի համերաշխությունն էր հայտնել նախագահ Բաշար Ասադի վարչակարգի հակառակորդներին: Սիրիայի իշխանությունները այդ քայլը իրավամբ գնահատել էին որպես միջամտություն իրենց երկրի ներքին գործերին եւ զանգվածային անկարգությունների հրահրման կոչ:

Պետդեպարտամենտի մամլո քարտուղար Մարկ Թոները հայտարարել է, որ Ֆորդի վերադարձը անհրաժեշտ է ԱՄՆ-ի նպատակների իրականացման, մասնավորապես ընդդիմության առաջնորդների հետ բանակցությունների ծավալման համար:

Ֆրանսիայի արտգործնախարարությունը իր հերթին հայտարարել է, որ Սիրիա է վերադառնում դեսպան Էրիկ Շեւալյեն, որին նոյեմբերին Փարիզ էին կանչել Ֆրանսիայի դեսպանատան վրա Սիրիայում կատարված հարձակումից հետո:

ԱԳՆ-ն ավելացրել է, որ Շեւալյեի վերադարձի հետ կապված մտահոգության պատճառները չեն վերացել, սակայն Սիրիայում դեսպանի ներկայությունն ու աշխատանքը մեծ կարեւորություն ունեն: Արտգործնախարարությունն ընդգծել է, որ պաշտոնական Փարիզը մնում է Սիրիայի ժողովրդի կողքին:

# «Վախենամ՝ Էրդողանը ներողություն խնդրի նաեւ հայերից...»

*1-ին էջից*

Այլ կերպ, 1937-38-ին Դերսիմում շրջանառության մեջ էր դրվել ցեղասպանության մեկ այլ տարբերակ, անհամեմատ փոքր չափերով, որովհետեւ ժամանակակից Թուրքիայի հիմնադիր քեմալականները ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների հետ պետության հարաբերություններում ելակետ են ընդունել Հայկական հարցը հայ ժողովրդի բնաջնջմամբ կարգավորելու երիտթուրքական սկզբունքը:

Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանությունը ժխտող տրամաբանությունը պիտի ժխտեր նաեւ Դերսիմի կոտորածները, իսկ դրանց նմանությունը պետք է դրսեւորման նոր առիթ հանդիսանար հայկական դավադրության որոնումների համար: Այդ առումով հատկանշական է Ալի Աղամհասանի դեկտեմբերի 5-ին adanamedya.com հայքէջում հրապարակված հոդվածը: Դա քաղել ենք Ստամբուլի «Հայթերթից», ներկայացնում ենք հատվածաբար:

Ահա թե ինչ է գրել. «Իրադարձությունները պետք է գնահատել ելնելով տվյալ ժամանակի պայմաններից: Պատմական իրադարձությունը մեր օրերի չափանիշներով գնահատելու դեպքում դա նկրտում է ունենում: Նրանք, ովքեր առերեսման քողի տակ ձգտում են հաշիվ մաքրել մեր նախնիների հետ, շուռ տալով պատմական ճշմարտությունները, Դերսիմի հարցը մտցրին օրակարգ: Գլոբալ սադրիչները Նոբելյան մրցանակով էին պարգեւատրել Օրհան Փամուքին, որ հայերի ցեղասպանության մասին հայտարարություն էր արել: Տեսնում ենք, որ հերթի են կանգնում նրանք, ովքեր Դերսիմի հարցը փորփրելու շնորհիվ Նոբելյան մրցանակի են ձգտում:

Որն էր Դերսիմի հարցում պետության անունից ներողություն խնդրելու իմաստը: Մանավանդ որ դա արվել է ոչ թե նախագահականում կամ վարչապետարանում, այլ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության համաժողովում: 16-րդ դարից ի վեր Դերսիմում ինքնիշխանություն էր, պետությանը հարկեր չէին մուծում, զինծառայությունից խուսափում էին: Այսինքն՝ դեռեւս օսմանյան շրջանում փորձ էր արվում վերահսկողություն սահմանել այնտեղ, բայց ապարդյուն: Վերջապես երկրում հաստատվեցին հանրապետական կարգեր, սակայն դերսիմցիները զինվելով՝ ըմբոստացան Թուրքիայի Հանրապետության դեմ: Յուրատեսակ պետություն էին դարձել պետության մեջ: Ո՞ր պետությունը կհանդուրժի 15 հազար զինյալի ապստամբությունը: Տրամաբանական էր, որ այս ապստամբությունը Քեմալ Աթաթուրքի, վարչապետ Ջելալ Բայարի եւ մարշալ Ֆեւզի Չաքմաքի ձեռնարկումներով ճնշվեր: Երբ ճնշվում է պետության դեմ բարձրացված ապստամբությունը, ի՞նչ կարեւոր է, թե քանի մարդ է մեռնում: Երբ դուք կոտորածի մեջ եք մեղադրում նրանց, ովքեր ճնշել են Դերսիմի ապստամբությունը, ապա ինչո՞վ եք բացատրելու PKK-ի որջերի մերօրյա ռմբակոծությունն ու PKK-ականների սպանությունները:

Օսմանյան կայսրությունը փլուզվելիս, երբ մեծ տերությունները զավթում էին մեր երկիրը, չեզոքացվեցին թշնամիների հետ թուրք զինվորներին սպանող հայերը: Հետաքրքրական է, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության առաջնորդը (նկատի ունի Էրդողանին) հայերից էլ ներողություն կխնդրի՞ թե՞ ոչ:

Վախենամ, որ նա ներողություն խնդրի նաեւ հայերից: Ի վերջո, ինքն է հանդես եկել հայկական նախաձեռնությամբ: Կարծում եմ, Դերսիմի առնչությամբ ներողություն խնդրելը նպատակ է հետապնդում դա հանգեցնել նաեւ Հայկական հարցին: Դերսիմի հայերի միության նախագահ Միհրան Փրկիչը Հայաստանում հայտարարել է. «Դերսիմի գյուղերում բնակչության 75 տոկոսը հայեր են: Շնորհիվ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության, մենք՝ հայկական ծագումով քաղաքացիներս, կարողանում ենք արտահայտել մեր ինքնությունն ու հայկական եկեղեցի գնալ: Օսմանյան կայսրությունում իթթիհատական սկզբունքների տարածումից հետո դերսիմցի հայերը դարձան ալավիներ: Երբ օսմանյան բանակները ներխուժեցին Դերսիմ՝ ոչնչացնելու հայերին, հայերը ապաստանեցին ալավի աշիրաթներին... »:

Ժամանակին այս հացն արծարծել էր Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Հալաչօղլուն: Նա զեկուցագիր էր ներկայացրել կառավարությանը, որտեղ բացատրում էր, որ PKK-ն մեր քրդական ծագումով քաղաքացիները չեն կազմավորել, այլ՝ քրդացած հայերը: Այս զեկուցագրից հետո նրան հսկույն ազատել էին պաշտոնից: Առ այսօր Դերսիմում մահացածների աճյունը թեեւ վերցնում են ալավիական աղոթարանից, սակայն նրանց թաղում են հայկական գերեզմանոցում: Գիտենք, որ նման կերպ են վարվել Քըլըչդարօղլուի (Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ) ազգականների հետ: Միաժամանակ հայտնի են նրանք, ովքեր ալավի են ձեւանում, բայց մի կողմ թողած ալավիների ավանդույթները, գաղտնի հետամուտ են լինում հայկական մշակույթին ու դավանանքին:

Մի՞թե չեն զգում նրանք, ովքեր հանուն առերեսման փորփրելով անցյալի իրադարձությունները, ատելություն ու թշնամանք են սերմանում հասարակության մեջ: Խնդիրը ալավիները չեն, այլ երկրի սուննի առաջնորդները, որոնք ուզում են հաշիվ մաքրել մեր նախնիների հետ այն ժամանակ, երբ ալավի քաղաքացիները միահամուռ ձգտում են մոռանալ անցյալի դեպքերը»:

ՌՈՒՍ-ՍԵՐԲԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

# Մարդասիրական օգնություն Կոսովոյի սերբերին

## *ՌԴ քաղաքացիության խնդրանքը մերժվեց*

ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարությունը երեկ առավոտյան մարդասիրական օգնության բեռներ է ուղարկել ինքնահռչակ Կոսովոյում հակամարտության մեջ հայտնված սերբերին: 25 ավտոմեքենաներից կազմված շարասյունը Կոսովո է մեկնել մերձմոսկովյան Նոգինսկ քաղաքից: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը, վկայակոչելով նախարարության ներկայացուցչին:

Ավելի վաղ Կոսովոյի ալբանական իշխանություններից դժգոհ 20 հազար սերբեր Մոսկվայից խնդրել էին ՌԴ քաղաքացիություն, բայց մերժում էին ստացել եւ ասես դրա դիմաց ստանալու են մարդասիրական օգնություն: Ավտոմեքենաները տանում են շարժական էլեկտրակայաններ, ծածկոցներ, սննդամթերք, ամանեղեն եւ դաշտային կահ-կարասի: Այդ ամենի ընդհանուր քաշը 284 տոննա է: Ավտոշարասյունը Կոսովո կհասնի դեկտեմբերի 12-ին:

Նոյեմբերին նույն նախարարության «Իլ-76» ինքնաթիռը Կոսովոյի սերբերի համար առաջին մարդասիրական օգնությունն էր տարել (մթերքներ, փոքր վառարաններ, ամանեղեն):

Կոսովոյում իրադրությունը սրվեց սեպտեմբերին, երբ Պրիշտինան փորձեց զավթել Սերբիայի սահմանի մոտ գտնվող երկու անցակետ: Ի պատասխան՝ այդ շրջանում ապրող սերբերը անցակետերի մատույցներում բարիկադներ սարքեցին:

Կոսովոյի ազգամիջյան հակամարտությունը սկսվեց 1980-ականներին, երբ երկրամասում արդեն մեծամասնություն դարձած ալբանացիները հանդես եկան Հարավսլավիայից անկախանալու օգտին: Շուտով դիմակայությունը վերաճեց պատերազմի՝ բազմաթիվ զոհերով: Եվրոպան եւ ԱՄՆ-ը ալբանամետ դիրք բռնեցին:

1999-ին ՆԱՏՕ-ի օդուժը ռմբակոծեց Սերբիայի տարածքը, որի իշխանությունները ի վերջո զորքը դուրս բերեցին Կոսովոյից: Այնտեղ մտան ՆԱՏՕ-ի խաղաղարար ուժեր:

Արեւմուտքի աջակցությամբ Կոսովոյում իշխանությունը կենտրոնացավ ալբանացիների ձեռքին, որոնք 2008-ի փետրվարի 17-ին հռչակեցին անկախություն: Կոսովոյի ինքնիշխանությունը ճանաչել են 85 պետություններ, ներառյալ ԱՄՆ-ը եւ ԵՄ երկրների մեծ մասը: Այդ անկախությունը չեն ճանաչում Սերբիան, Ռուսաստանը, Չինաստանը եւ մի շարք այլ երկրներ, ինչպես նաեւ ՄԱԿ-ի ԱԽ-ն եւ Ընդհանուր ժողովը:

Պ. Ք.

# ՌԴ Պետդումայի ընտրությունների արդյունքները




Ռուսաստանի ԿԸՀ-ն մշակել է Պետդումայի ընտրությունների քվեաթերթիկների 99,9 տոկոսը: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը՝ վկայակոչելով ԿԸՀ նախագահ Վլադիմիր Չուրովին:

Վերջին հաշվարկների համաձայն՝ «Միացյալ Ռուսաստանը» ստացել է քվեների 49,3 տոկոսը: 2-րդ տեղում ՌԴ կոմկուսն է, որն ստացել է 19,2 տոկոս: Հաջորդ տեղում «Արդար Ռուսաստանն» է, որի օգտին քվեարկել է ընտրողների 13,25 տոկոսը: Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը ստացել է 12 տոկոս:

Այս տվյալների հիման վրա 450 տեղանոց Պետդումայում «Միացյալ Ռուսաստանը» կունենա 238 պատգամավոր, Կոմկուսը՝ 92, «Արդար Ռուսաստանը»՝ 64, լիբերալ-դեմոկրատները՝ 56: Ընտրություններին մասնակցել է ձայնի իրավունք ունեցողների 60,2 տոկոսը:

6-րդ գումարման Պետդումայի ընտրություններին դեկտեմբերի 4-ին մասնակցել է 7 կուսակցություն, որոնցից 3-ին («Յաբլոկո», «Ռուսաստանի հայրենասերներ» եւ «Արդար գործ») չի հաջողվել հաղթահարել 7-տոկոսանոց արգելապատնեշը:

Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները հայտարարում են, թե քվեարկությունն ուղեկցվել է բազմաթիվ խախտումներով ու կեղծարարություններով: Մինչդեռ իշխանությունների ներկայացուցիչները, այդ թվում նախագահ Դմիտրի Մեդվեդեւը եւ նախագահական աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Վլադիսլավ Սուրկովը, ընտրությունների արդյունքները համարում են արդար եւ կասկածներ են արտահայտում զանգվածային կեղծարարությունների առնչությամբ:

ԲԵՅՐՈՒԹ

# «Փթիթ» մանկապատանեկան պարբերաթերթի 3-րդ համարը



Բեյրութում լույս տեսնող «Փթիթ» մանկապատանեկան պարբերականը 3-րդ համարն է թողարկել: Ինչպես նախորդ երկուսը, այս վերջինն էլ բովանդակությամբ հագեցած, գունավոր, գրավիչ պատկերազարդումներով երեխաների հետաքրքրությունը շարժող հրատարակություն է:

«Փթիթի» առաջադրանքները միտքը կլանող, հնարամտություն պահանջող եւ աշխուժություն առաջացնող հատկանիշներ ունեն, դրանց մեջ անպայման մի անակնկալ, նորություններ կան. մեկ անգամից պատասխանելու դժվարությունը ավելի է սրում հետաքրքրությունը: Սա վերաբերում է հատկապես խաղ-վարժություններին՝ բառային եւ թվային, որոնք զարգացնում են երեխայի լեզվական եւ մաթեմատիկական ունակությունները, տրամաբանությունը: Ընթերցանության տեքստերը ուշագրավ են բովանդակությամբ եւ ուսանելի, դաստիարակիչ նշանակությամբ, գեղեցիկ ձեւավորումը ավելի է նպաստում, ընթերցումը ավելի հաճելի դարձնում: Միօրինակությունը, որպես կանոն, վերացված է, անընդհատ փոփոխություն-տարբերություններ կան, խաղ-վարժություն, տեքստ, հանելուկ-առաջադրանք-խորհուրդներ, խաչբառեր՝ մեկը մյուսին հաջորդող: Իսկապես այսօրվա երեխայի պահանջներին համապատասխանող, նրանց զբաղեցնող ձեւեր-մեթոդներ են ընտրել խմբագրության պատասխանատուները՝ Վերժինե եւ Կարո Աբրահամյանները: Գովելի է նաեւ հեքիաթների եւ շապիկի ձեւավորողներ Կարո Խաչերյանի, Սմբատ Ղազելյանի եւ մյուսների կատարած աշխատանքը, որով լիովին բավարարում են իրենց առաջադրած խնդիրները՝ փորձել ժամանց պարգեւել երեխային, քաջալերել ընթերցասիրությունը, բարոյական պատգամներ փոխանցել տեքստերի միջոցով, հայերենի բառամթերքը հարստացնել, մշակել տրամաբանությունը՝ լեզվական եւ թվաբանական խաղերի միջոցով:

«Փթիթը» իր վերջին էջերում տեղեկացնում է սփյուռքահայ մանկապատանեկան այլ պարբերականների («Նոր կեանք», «Կկու») լույս ընծայման մասին:

Ս. Բ.

# «Նարեկացի» ժողնվագարանների համույթի մեծ համերգը՝ այսօր

**Այսօր Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի բեմում կկայանա «Նարեկացի» ժողովրդական նվագարանների այս տարվա ամենամեծ մենահամերգը: Համույթը կներկայանա բեմական նոր հանդերձանքով, նոր ու ուշագրավ՝ յուրօրինակ մեկնաբանություններով, մշակումներով ու պրեմիերաներով հագեցած համերգային ծրագրով: Համերգի ընթացքում ներկայացվող բոլոր ստեղծագործությունները կմեկնաբանի ազգագրագետ Արուսյակ Սահակյանը: 2008 թ.-ից՝ հիմնադրման օրվանից, համույթի գեղարվեստական ղեկավարն է անվանի թառահար եւ խմբավար Հովիկ Սահակյանը, ով թառահարի եւ նվագախմբի դիրիժորի որակավորում է ստացել Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Համույթի յուրօրինակ ելույթին «Ազգը» կանդրադառնա առաջիկայում:**



Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# Գիտաժողով՝ նվիրված Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակին

**Այսօր կմեկնարկի ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊԱԿ-ի կազմակերպած երկօրյա գիտաժողովը, որը նվիրված է Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակին: Գիտաժողովը տեղի կունենա ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի դահլիճում:**

Ս. Ս.




# Բարձր արվեստին առնչվելուց հետո պետք է դուրս գաս առավել պայծառացած ու մաքրված

*Հարցազրույց գեղանկարիչ Խաչիկ Հարությունյանի հետ*

**- Ապրիլի 20-ին տեղի ունեցավ ցուցահանդես, որտեղ ներկայացված էր նաեւ Ձեր գեղանկարչական շարքը, յուրաքանչյուր ցուցադրում իր խորհուրդն ու նշանակությունն ունի, ինչո՞վ էր պայմանավորված այս ցուցադրումը:**

- Ցուցահանդեսը կոչվում էր «Դիմանկար տեղում», մասնակցում էին 6 գեղանկարիչ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի մոտեցում ուներ դիմանկար ասվածին: Տարբեր բնավորություններ, տարբեր անհատականություններ, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն մտածողությունն ուներ: Նույն բնորդի վեց տարբեր մեկնաբանություններ, եւ երեւի թե հաջողված փորձ էր եւ գեղեցիկ ստացվեց: Ես ավելի հակված եմ գեղանկարի դասական մտածողությանը: Գեղանկարչական խնդիրների լուծում չկար, այլ կար կերպարի մեկնաբանություն, կերպարի բացահայտում: Դիմանկարը մոտեցման յուրահատկություն ունի իր մեջ: Երբ ես Եվրոպայում էի, այնտեղ արհեստավարժ կերպով սոցռեալիստական դիմանկարներ էի անում, որովհետեւ ինձ մոտ սոցռեալիստական դպրոցը շատ լավ «նստած» է, այդ ոճը գնահատելի էր էնտեղ: Հիմա ինչ որ անհասկանալի բան է կատարվում, ազատություն բառը շատ է շահարկվում արվեստում, ես դա այդպես էլ չեմ կարողանում հասկանալ: Երբ դու վրձինը կամ մատիտը վերցնում ես, անմիջապես գերի ես դառնում ինքդ քեզ, կամ երբ սկսում ես մտածել այդ մասին, արդեն զրկվում ես ազատությունից: Քրիստոսն ասում է՝ երբ դու մտածում ես մեղքի մասին, դա էլ է մեղք, այնպես որ ազատության մասին խոսք լինել չի կարող: Կա արհեստավարժություն եւ մասնագիտական հմտություն, որը ես յուրացրեցի մեր գեղանկարչության երեւելիների՝ Ղուկաս Չուբարյանի եւ Հովհաննես Զարդարյանի մոտ: Հետագայում Վահան Արծրունյանի հետ մտերմությունը ինձ շատ բան տվեց: Հետեւելով Արծրունյանի աշխատելաոճին՝ շատ բաներ ինձ մոտ փորձում էի շտկել, եւ դա կարծում եմ կայացման եւ ինքնահաստատման լավագույն ուղիներից է: Իսկ դիմանկարում արտաքինն ու բնավորությունը փոխկապակցված են, ասենք եթե աչքերը կապույտ են, ես կարող եմ ամբողջ աչքի հատվածը կապույտ դնել, եւ դա շեշտում է նրա բնավորության հիմնական գծերը:



**- Եղե՞լ են ստեղծագործական դժվար շրջափուլեր, եւ եթե այո, ինչպե՞ս եք հաղթահարել:**

- Աշխատել եմ հաղթահարել նման պահերը: Իհարկե լինում են պահեր, երբ կամ դու ես հեռանում ստեղծագործական ներշնչանքից, կամ ստեղծագործական ներշնչանքն է քեզ լքում: Հաճախ շատ դժվար է լինում, բացակայում են նաեւ նախապայմանները, որոնք քեզ մղում են ստեղծագործելու: Ամռանը շատ դժվար է նկարել, որովհետեւ արեւը, բնությունը վերցնում են իրենցը, ես սիրում եմ ձմռանը նկարել, որովհետեւ ձմռան լույսը իր արծաթափայլությամբ անասելի ձգող է եւ գրավիչ, ձմռանը անսահման խաղաղություն կա, սիրում եմ խաղաղության մեջ նկարել, իսկ դժվարություններ լինում են, երբ խանգարված ես կամ ինչ-որ բան քո ուզածի պես չի լինում:

**- Դուք որպես աշխատելաոճ ընտրում եք անդադար աշխատե՞լը, թե՞ ներշնչանքը անհրաժեշտ է:**

- Անընդհատ աշխատելը: Դե, ներշնչանք իհարկե լինում է, բայց ես կարեւորում եմ աշխատասիրությունը, ամեն օր գրեթե աշխատում եմ: Գիշերները չեմ նկարում, էլեկտրական լույսը խաբուսիկ է , իհարկե գրաֆիկական գործեր կան , որոնք գիշերն էլ եմ նկարում, նաեւ գրում եմ: Ներշնչանքն էլ եթե լինում է, ավելի լավ, կարող եմ սիրահարված լինել, չնայած սերը խանգարում է նկարելուն, ես մինչեւ վերջ կա՛մ սիրելի կնոջն եմ նվիրվում, կա՛մ նկարչությանը:

**- Կա՞ն թեմաներ, որ Ձեր գեղանկարչության մեջ առանձնահատուկ տեղ ունեն:**

- Իհարկե կան՝ կանայք են. կանայք՝ հրեշտակի մարմնացմամբ, կանայք՝ զրուցելիս, քայլելիս , եւ նատյուրմորտն է ինձ անչափ հետաքրքրում, պլաստիկան, գիծը, քնքշությունը, անգամ սենտիմենտալությունը նկարչության մեջ, հնարովի աշխարհն ու իրական կյանքն եմ սիրում: Այն՝ ինչը լույսի մեջ է. գույնը մի քիչ դժվար բան է , ներկելը հեշտ է , բայց մատուցելը՝ դժվար, որ կարմիրը դառնա հոգի, սեր, կապույտը դառնա սեր...

**- Զբաղվում եք նաեւ գրականությամբ, պոեզիան եւ արձակը ի՞նչ տեղ են զբաղեցնում Ձեր կյանքում:**

- Իմ էության հետ կապ ունի, ես այդպիսին եմ: Էն կուտակումները, որոնք չեմ կարողանում արտահայտել վրձնով, դառնում են պոեզիա կամ արձակ: Ինքս ինձ բացահայտելու ճանապարհներ եմ փնտրում, որը կարող է դառնալ բանաստեղծություն, կամ նովել: Ես գրելուց չեմ մտածում, որ ես բանաստեղծ եմ կամ արձակագիր, բայց նկարիչ լինելու զգացողությունս մի քիչ ավելի խիստ է , որովհետեւ ես նկարիչ եմ:

**- Ի՞նչ դեր ունի երաժշտությունը Ձեր ստեղծագործական առօրյայում, եւ եթե փորձեք նկարել որեւէ ջազային երաժշտություն, ի՞նչ գույներով կպատկերեք...**

- Իմ գերադասած գույները որպես էդպիսին չկան, ցանկացած գույնով էլ նկարում եմ, իսկ ջազը էնոցիաների հետ կապված բան է, ես ջազը կարող եմ համեմատել էքսպրեսիոնիզմի հետ, ես իմ ճանապարհի ընթացքում էքսպրեսիոնիզմից եկա ինչ-որ բանի, երբ ամեն ինչ շարժման մեջ է, ինձ հանգիստ վիճակի է բերում դասական երաժշտությունը, սակայն ջազ էլ եմ սիրում, մորս երգն էլ եմ սիրում, ինձ համար երաժշտությունը պարզապես կենսակերպ է...

**- Ինչի՞ն եք հավատում եւ ի՞նչն է Ձեզ անհանգստացնում:**

- Ամեն ինչին էլ հավատում եմ: Չարին, բարուն, վարդին էլ, թռչունին էլ, խաբող կանանց էլ եմ հավատում, երբեք ոչ մեկի աշխատում եմ չասել, որ չեմ հավատում: Նկարչության մեջ դժվար է ստելը, պոեզիայում ավելի հեշտ է, երբեմն պատրանքային պատկեր է ստեղծվում, բայց դա դառնում է պոեզիայի բարձրագույն ձեւ, խոսքը գեղեցիկ ստին է վերաբերում, սուտ, որը դիմացինին կարող է թեւ տալ ու ոգեւորել: Իհարկե չեմ սիրում դավաճանությունը , դավաճանությունը խաբել չի, դա հրաժարումն է ինքդ քեզնից, ամենածանր բանն է: Անհանգստացնում է կանխազգացողությունը, դա վատի զգացողությունն է, որ ինձ վախեցնում է: Երբ իրականությունը չի համապատասխանում ճշմարտությանը, այս երկուսի հարաբերությունը ինձ անհանգստացնում է, գիշերները չքնելու առիթ է տալիս, այդ ժամանակ չեմ նկարում: Չեմ սիրում նկարչության մեջ սյուռռեալիզմը, ընդունում եմ որպես ձեւ, մտածելակերպ բայց ես այդպիսին չեմ, նկարչությունը չպետք է բացատրի, այլ պետք է պատկերի, գեղանկարչության գործառույթը պատկերավորությունն է: Եվ այդ պատկերը չպետք է սլաքներ ունենա դեպի քո վերքը, քո սիրտը, քո աչքը, լույսը, չպիտի խանգարի ապրելուն: Դալիի ցուցահանդեսից հետո երկու ժամ վատ զգացողության մեջ էի, արվեստը չպետք է բացասական ներգործություն ունենա, բարձր արվեստին առնչվելուց հետո պետք է դուրս գաս առավել պայծառացած ու մաքրված: Այնքան սիրուն բաներ կան, որ մեր օրերում խաթարվում են: Սարյանի պատերազմին նվիրված կտավներում արյուն ու ավերվածություններ չեն պատկերված, այլ ծաղիկներ, ծաղիկների ափշեցուցիչ հեղեղ: Այսօրվա ֆիլմերում էլ հակամարդկային գաղափարներն են գերիշխում, որը ի վերջո սերունդ է դաստիարակում, եւ նույն սերնդին դաստիարակելու ճանապարհին, փառք Աստծո, ստեղծվել ու ստեղծվում են հզոր, բարձրաճաշակ գործեր, օրինակ՝ մեծն Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմը, որը իր պատկերավորությամբ, թարմությամբ, նորերի մոտ բարձր ճաշակ կարող է ձեւավորել արվեստի նկատմամբ...

Հարցազրույցը՝
ՇՈՒՇԱՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԱԶԳ

## Մարզական

# Արթուր Աբրահամը կմենամարտի Պաբլո Ֆարիասի հետ

Միջինքաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամը ռինգ դուրս կգա հունվարի 14-ին: Այդ օրը նա Գերմանիայի Օֆենբուրգ քաղաքում կմենամարտի 23-ամյա արգենտինացի բռնցքամարտիկ Պաբլո Ֆարիասի հետ:



Ինչպես հայտնի է, Արթուր Աբրահամը 2-րդ միջինքաշային կարգում Super Six մրցաշարում անհաջող հանդես գալուց հետո որոշել է կրկին վերադառնալ միջինքաշային կարգ: Այդ գործընթացը պետք է աստիճանաբար տեղի ունենա: Արթուրն աստիճանաբար նվազեցնում է անձնական քաշը: Նա մտադիր է մի քանի մենամարտեր անցկացնել մինչեւ միջինքաշային կարգին հասնելը եւ կրկին ներգրավվել աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մրցավեճին:

«Իմ երկրպագուներին ցանկանում եմ լավ բռնցքամարտ հրամցնել: Իհարկե, նախորդ պարտություններից հետեւություններ եմ հանգել, մեծ աշխատանք եմ տարել սխալներս վերացնելու ուղղությամբ: Այժմ ժամանակն է առաջ գնալ եւ պատրաստվել նոր մենամարտերի: Ցանկանում եմ կրկին նվաճել երկրպագուներիս սրտերը, իսկ դրա համար պետք է տպավորիչ հաղթանակ տոնել: Հունվարի 14-ը ինձ համար նոր հաշվարկի սկիզբ կլինի: Ցանկանում եմ նոր տարին սկսել վառ հաղթանակով, իսկ հետո արդեն սկսել պայքարն աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանանալու համար», հայտարարել է Արթուր Աբրահամը:

Արգենտինացի բռնցքամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում 20 մենամարտ է անցկացրել, որից 19-ում հաղթել է: Միակ պարտությունը նա կրել է իր վերջին մենամարտում: Վերջին 3 մենամարտերից երկուսում Ֆարիասը հանդես է եկել կիսածանրքաշային կարգում, իսկ մեկում համարյա 2 կգ-ով գերազանցել է քաշային այդ կարգի նորման:

Արթուր Աբրահամը 35 մենամարտ է անցկացրել: Դրանցից միայն երեքում է Արթուրը պարտվել: Երկար ժամանակ նա պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի էր:

# «Զենիթն» առաջին անգամ հաղթահարեց խմբային մրցաշարի արգելքը

4 խմբում ավարտվեց ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարը: Մեծ հաջողության հասավ Սանկտ Պետերբուրգի «Զենիթը», որն իր պատմության մեջ առաջին անգամ չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճեց: «Զենիթի» ֆուտբոլիստներն այդ հաջողության համար շատ բանով պարտական են իրենց դարպասապահ Վյաչեսլավ Մալաֆեեւին, որը «Պորտոյի» հետ արտագնա խաղում հրաշքներ գործեց ու դարպասն անառիկ պահեց: Գրանցված գոլազուրկ ոչ-ոքին հնարավորություն ընձեռեց «Զենիթին» G խմբում գրավել 2-րդ տեղը ու շարունակել պայքարը:

Իսկ խմբի հաղթող ճանաչվեց Կիպրոսի «Ապոելը», որը չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղարկության հայտնությունն է: Ճիշտ է, ավարտական տուրում «Ապոելը» սեփական հարկի տակ 0-2 հաշվով զիջեց Դոնեցկի «Շախտյորին», սակայն դա չխաթարեց թիմի առաջատարի դիրքը:

E խմբի կենտրոնական խաղում Լոնդոնի «Չելսին» սեփական հարկի տակ 3-0 հաշվով առավելության հասնելով իսպանական «Վալենսիայի» նկատմամբ, 11 միավորով գրավեց 1-ին տեղը: Պայքարը կշարունակի նաեւ գերմանական «Բայերը», որը Բելգիայում ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը տեղի «Գենկի» հետ:



F խմբում «Արսենալը» ժամկետից շուտ նվաճել էր հաջորդ փուլի ուղեգիրը, ուստի «Օլիմպիակոսի» հետ արտագնա խաղում խաղադաշտ էր դուրս բերել 2-րդ կազմը: Հույները հաղթեցին 3-1 հաշվով, սակայն այդ հաղթանակը նրանց ոչինչ չտվեց: 2-րդ ուղեգիրը բաժին հասավ ֆրանսիական «Մարսելին», որը հյուրընկալվելիս 3-2 հաշվով հաղթեց Դորտմունդի «Բորուսիային»: Առաջին խաղակեսից հետո դաշտի տերերը հաղթում էին 2-1 հաշվով, սակայն խաղավերջում ֆրանսիական ակումբը 2 գոլ խփեց եւ տիրեց ուղեգրին:

H խմբում իսպանական «Բարսելոնը» վաղուց էր լուծել թե ուղեգրի, թե 1-ին տեղի հարցը: Թեեւ ԲԱՏԷ-ի հետ մրցավեճում «Բարսելոնը» «Կամպ նոու» մարզադաշտում հանդես եկավ երիտասարդական կազմով, սակայն 4 անպատասխան գնդակ խփեց մրցակցի դարպասը:

2-րդ ուղեգիրն էլ ժամկետից շուտ նվաճել էր «Միլանը», որը հյուրընկալվելիս ոչ-ոքի (2-2) խաղաց պորտուգալական «Սպորտինգի» հետ: Ընդ որում «Միլանը» հաղթում էր 2-0 հաշվով, սակայն խաղի վերջին եւ ավելացված րոպեներին դաշտի տերերը 2 գոլ խփեցին ու խուսափեցին պարտությունից:

# 132 տարվա բանտարկություն պայմանավորված խաղերի համար

Թուրքական «Ֆեներբահչեի» նախագահ Ազիզ Յիլդիրիմին 132 տարվա ազատազրկում է սպառնում: Նա մեղադրվում է կաշառակերության, պայմանավորված խաղերի կազմակերպման եւ խաբեության մեջ: Բացի ֆուտբոլային գործունեության հետ կապված մեղադրանքներից, նրան մեղադրում են նաեւ հանցավոր խմբի կազմակերպման, տնտեսական մի շարք հանցագործությունների մեջ:

Ազիզի դատապաշտպանները դատախազ Մեհմետ Բերկի պահանջը չափազանցված են համարում, գտնելով, որ նման պատիժ սահմանում են միայն մի քանի սպանություն իրագործած անձի նկատմամբ:

Բացի Ազիզ Յիլդիրիմից, կալանքի տակ գտնվող եւս 31 անձիք սպասում են իրենց դատավճռին: Նրանք մեղադրվում են թուրքական ֆուտբոլում մեծ աղմուկ բարձրացրած կոռուպցիոն սկանդալում՝ կապված ֆուտբոլային հանդիպումների առուծախի հետ: 93 հոգի էլ դատախազություն են հրավիրվել ցուցմունք տալու:

# Կարոլին Վոզնյացկու 5-րդ անընդմեջ տիտղոսը

Թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման առաջատար Կարոլին Վոզնյացկին 5-րդ տարին անընդմեջ ճանաչվել է Դանիայի լավագույն թենիսիստուհի: Ընթացիկ մրցաշրջանում նա հաղթող է ճանաչվել 6 մրցաշարում՝ Դուբայում, Ինդիան Ուելսում, Չարլստոնում, Բրյուսելում, Կոպենհագենում եւ Նյու Հեյվենում: Բացի այդ, Վոզնյացկին 2-րդ տարին անընդմեջ մրցաշրջանն ավարտեց դասակարգման ցուցակի 1-ին հորիզոնականում:

Ճիշտ է, Վոզնյացկին ներկա չէր պարգեւատրման արարողությանը, սակայն ֆեդերացիայի հասցեով շնորհակալական նամակ էր հղել: Դանիացի թենիսիստուհին նախընտրել էր իր ընկերոջ՝ բրիտանացի գոլֆիստ Ռորի Մաքիլռոյի հետ շրջագայության մեկնել:

## ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

# Սամվել Մելքոնյանը կխաղա Իրանի «Պերսեպոլիսում»

Ինչպես տեղեկացանք «Միկա» ակումբից, թիմի կիսապաշտպան Սամվել Մելքոնյանը կես տարով պայմանագիր է կնքել Իրանի «Պերսեպոլիս» թիմի հետ: Իրանի բարձրագույն խմբում հանդես եկող «Պերսեպոլիսը» 20 միավորով ընթանում է 8-րդ տեղում: Թիմի դարպասապահների մարզիչն է Հարություն Աբրահամյանը, որը Իրանի ակումբներում աշխատելու արդեն զգալի փորձ ունի:

Սամվել Մելքոնյանը ֆուտբոլի հանրապետական մարզադպրոցի սան է: ՀՀ առաջնություններում նա ելույթները սկսել է 2002-ից Երեւանի «Սպարտակի» կազմում, իսկ թիմի լուծարումից հետո տեղափոխվել է «Բանանց»: Վերջինիս կազմում հանդես գալու ընթացքում Մելքոնյանը տեղափոխվեց Դոնեցկի «Մետալուրգ», սակայն հետագայում վերադարձավ հարազատ կոլեկտիվ:

Ընթացիկ մրցաշրջանի սկզբում Սամվել Մելքոնյանի ծառայություններից «Բանանցը» հրաժարվեց: Ֆուտբոլիստը մտադիր էր ելույթները շարունակելու Իրանում, սակայն ընդունեց «Միկայի» առաջարկն ու 3-րդ շրջանից հանդես եկավ այդ թիմում: Նրա պայմանագրի ժամկետը «Միկայի» հետ արդեն ավարտվել է:

Ընդհանրապես վերջին տարիներին Հայաստանից շատ ֆուտբոլիստներ են մեկնում Իրան, որտեղ բավականին լավ են վարձատրում: Ներկայումս Իրանի տարբեր թիմերում են հանդես գալիս Լեւոն Փաչաջյանը, Վալերի Ալեքսանյանը, Արարատ Առաքելյանը, Մաթիս Ազիզյանը, Գրիգոր Մելիքսեթյանը:

# Լոնդոնում երկիշխանություն է

Լոնդոնի շախմատի մրցաշարի 4-րդ տուրում Լեւոն Արոնյանը հանգստանում էր: Ուշադրության կենտրոնում էր Մագնուս Կառլսենի եւ Վլադիմիր Կրամնիկի մրցավեճը: Մրցակիցները հաշտություն կնքեցին: Մյուս 3 պարտիաներն արդյունավետ ելք ունեցան: Անդրանիկ հաղթանակը տոնեց Նայջլ Շորթը, որը սեւերով պարտության մատնեց իր հայրենակից Մայքլ Ադամսին: Վիշվանաթան Անանդը, որ նախորդ 2 պարտիաներն ավարտել էր ոչ-ոքի, առաջին պարտությունը կրեց Հիկարու Նակամուրայից: Լյուկ Մակշեյնն առավելության հասավ Դեւիդ Հաուելի նկատմամբ:

4-րդ տուրից հետո մրցաշարում երկիշխանություն հաստատվեց: 8-ական միավորով աղյուսակը գլխավորեցին Մագնուս Կառլսենն ու Լյուկ Մակշեյնը: 7 միավորով նրանց հետապնդում է Հիկարու Նակամուրան: 3 հնարավորից 5 միավոր ունի Վլադիմիր Կրամնիկը: Լեւոն Արոնյանը 3 պարտիաներում 4 միավոր է վաստակել:

Այսօր կայանալիք 5-րդ տուրում Արոնյանը սպիտակներով կխաղա Կառլսենի հետ: Հաուելը սեւերով մրցելու է Նակամուրայի հետ:

# Հայ շախմատիստները 3-րդ տեղում են

Լվովում ավարտին է մոտենում Միխայիլ Վասիլիշինի շախմատի հուշամրցաշարը: A խմբում հանդես եկող Վահե Բաղդասարյանը 8-րդ տուրում հաշտություն կնքեց Սպարտակ Յուսուպինի հետ: Ավարտական տուրից առաջ նա 4,5 միավորով 3-րդ տեղում է: Խմբի հաղթողն արդեն հայտնի է: Առավելության հասնելով Ռոբերտ Ռիսի նկատմամբ, Յուրի Վովկը 6,5 միավորով անհասանելի դարձավ մրցակիցների համար: 2-րդ տեղում ընթացող Անդրեյ Վովկը հաղթելով Վադիմ Տրեգուբովին, վաստակեց 5 միավոր: Ավարտական տուրում Բաղդասարյանը կմրցի Ալեքսեյ Գոգանովի հետ:

B խմբում Տիգրան Պետրոսյանը սեւերով հաղթեց Անտոն Վոլովիկովին եւ 5 միավորով ընթանում է 3-րդ հորիզոնականում: Այս խմբում գլխավոր մրցանակը կվիճարկեն թուրք Բեթյուլ Յիլդիզն ու ռուսաստանցի Ալեքսեյ Կոստինը: Յիլդիզը հաղթեց իր գլխավոր հակառակորդ Կոստինին ու վաստակելով 7 միավոր, շրջանցեց նրան՝ դառնալով միանձնյա առաջատար: Կոստինը նրանից հետ է մնում կես միավորով:

Ավարտական տուրում Պետրոսյանը սպիտակներով կմրցի Անատոլի Զայարնիի հետ: Յիլդիզի մրցակիցը կլինի 3 միավոր ունեցող Իգոր Նեստերը, իսկ Կոստինը կխաղա 3,5 միավորով 5-րդ տեղում ընթացող Նատալյա Բուկսայի հետ:

# Վետերաններն առջեւում են 3 միավորի առավելությամբ

Չեխիայում անցկացվող շախմատի մրցաշարի 4-րդ տուրում վետերանների եւ «Ջնծաղիկների» մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Ռաֆայել Վահանյանը հաշտություն կնքեց Տանյա Սաչդեւայի հետ: Վետերաններից միակ հաղթանակը տոնեց Ռոբերտ Հյուբները՝ պարտության մատնելով Եվա Կուլովանային: Իսկ «Ջնծաղիկների» թիմից հաջողությունն ուղեկցեց Մարիա Մուզիչուկին, որը պարտության մատնեց Բորիս Գուլկոյին: Ոչ-ոքի ավարտվեց Նատալյա Պոգոնինայի եւ Վլաստիմիլ Հորտի մրցավեճը:



Այսպիսով, առաջին շրջանից հետո վետերանների թիմը 9,5-6,5 հաշվով հաղթում է «Ջնծաղիկներին»: Անհատական հաշվարկով վետերաններից լավագույն արդյունքն ունի Ռոբերտ Հյուբները, որը վաստակել է 3 միավոր: 2,5 միավոր ունի Վլաստիմիլ Հորտը, 2-ական միավոր են վաստակել Ռաֆայել Վահանյանն ու Բորիս Գուլկոն:

«Ջնծաղիկներից» լավագույնը Մարիա Մուզիչուկի արդյունքն է, որն ունի 3 միավոր: 1,5-ական միավոր են վաստակել Նատալյա Պոգոնինան եւ Տանյա Սաչդեւան, իսկ Եվա Կուլովանան իր օգտին կես միավոր է գրանցել:

2-րդ շրջանի մեկնարկային տուրում Ռաֆայել Վահանյանը կմրցի Մարիա Մուզիչուկի հետ: Հիշեցնենք, որ առաջին շրջանում անվանի վետերանը պարտվել էր:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԱԶԳ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Հարգելի ընթերցող: Սկսվել եւ շարունակվում է «Ազգ» օրաթերթի 2012 թ. բաժանորդագրությունը: Բաժանորդագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այն իրականացնող ներքոնշյալ մամուլի տարածման գործակալություններից.**

- Պրես-Ստենդ- (հեռ.՝ 54-41-99, www.armpress.am)
- Հայմամուլ- (հեռ.՝ 45-30-78, կայքէջ՝ www.haymamul.info.am)
- Հայփոստ- (հեռ.՝ 51-47-51, www.haypost.am)
- Պրես-Ատաշե- (հեռ.՝ 27-02-22, www.press-attache.am)
- Բլից Մեդիա- (հեռ.՝ 58-17-13, www.blicmedia.com)
- Թերթին կարող եք բաժանորդագրվել նաեւ Հանրապետության-47 հասցեում գտնվող խմբագրատանը (հեռ՝ 58-29-60, կայքէջ՝ www.azg.am):

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Այն ընթերցողները, ովքեր կներկայացնեն թերթի բաժանորդագրության կտրոնը, իրավունք կունենան ամիսը մեկ անգամ անձնական բնույթի մեկ անվճար հայտարարություն տեղադրել թերթում, որը 1 շաբաթ կտեղակայվի նաեւ էլեկտրոնային կայքէջում:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՊՁԲ -1/11**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը ՀՀ ԴԴՊԿՀ , որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներին), սահմանված կարգով կառաջարկվի կնքել Ծառայողական վկայականների ձեռքբերման՝ գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար Դատական ծառայողի և Դատական կարգադրիչների ծառայողական վկայականների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Ջ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 15.12.2011 թվականի ժամը 11:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը), դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

---

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը կազմակերպում է պարզեցված ընթացակարգ: Գնման առարկա է հանդիսանում նախարարության կարիքների համար հաշվողական տեխնիկայի /համակարգիչների/ նորոգման, տեխնիկական սպասարկման եւ հեռահաղորդակցության ցանցի, փոխանցման mss.am /Պորտալ համակարգ/ ծառայությունների ձեռք բերումը:

Լրացուցիչ ինֆորմացիա ստանալ կարող եք ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից կամ ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am պաշտոնական կայքից:

---

ՀՀ, ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Բնակարան, որի մակերեսն է՝ 125.9 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր համայնք, Տոլբուխինի փողոց, 3 շենք, թիվ 6 բնակարան : Լոտի մեկնարկային գինը՝ 55000000 ՀՀ դրամ:

Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով «բաց ընթացակարգով» 26.12.2011թ. ժամը 12:00-ին: Երկրորդ փուլը 13.01.2012թ.-ից, ժամը 12:00-ին նույն հասցեում՝ դասական եղանակով «բաց ընթացակարգով»:

Բնակարանը հանդիսանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա եւ զբաղեցված է գրավատուի կողմից: ՀՀ քաղ. օր.-ի 272-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն բնակարանի իրացումից հետո բնակարանի սեփականատիրոջ պահանջով գրավատուն պարտավոր է մեկ ամսում ազատել բնակարանը:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 1000000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին ( ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ 22.12.2011թ. ժ. 16:00-ն աճուրդի առաջին փուլին մասնակցելու համար եւ 11.01.2012թ. ժամը 16:00-ն աճուրդի երկրորդ փուլին մասնակցելու համար, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը, ինչպես նաեւ հատուցել աճուրդին մասնակցելու հետեւանքով նրա կրած վնասները: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 23.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 11:00-ից մինչեւ 15:00-ը՝ վերը նշված հասցեով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-15 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Սույն թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը 14:00–ին տեղի կունենա ՀՀ Սյունիքի մարզի Վարդանիձորի գյուղապետարանում «Կալեր Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Վանքի Գաբրոների հանքավայրի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում կամ Վարդանիձորի գյուղապետարանում: Հեռ. 22-14-85, 221568, 094122069

## Հայտարարություն

Սույն թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը 12:00–ին տեղի կունենա ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի գյուղապետարանում «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Կառնուտի անդեզիտների հանքավայրի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85, 221568, 094444432

## Վաճառվում է Daewoo Matiz Best

մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 4 300 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր. (full), գործարանային վիճակ:

**Հեռ.՝ (091) 32-88-89**

---


*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*

**ՍԱՐԻ ԹԵՅ**

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ
ԸՆՏԻՐ ԹԵՅ




25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63



ConverseBank
Բոլորի համար

Հեռ. (+ 374 10) 511 211
www.conversebank.am




Կատարեք անկանխիկ
գնումներ հատուկ
օրերին հատուկ
առեւտրի կետերում
ԿոնվերսԲանկ-ի
քարտերով եւ ստացեք
հավելյալ զեղչեր՝
անկախ գործող զեղչերից

VISA MasterCard 10%

ArCa 5%

Խանութների ցանկ

| Երկուշաբթի | | Երեքշաբթի | | Չորեքշաբթի | | Հինգշաբթի | | Ուրբաթ | | Շաբաթ | | Կիրակի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Europa օծանելիքի խանութ-սրահ | Իսահակյան 18 ա Թումանյան 30 | Orange Telecom | Հյուսիսային պող.1 | Benetton | Ամիրյան 1 | Violet սպասքի խանութ-սրահ | Տերյան 83 Մաշտոցի 48-79 | Chai Hana ռեստորան | Թումանյան 2, 28/20, 1/54 | Parma սուպեր-մարկետ | Վաղարշյան 10 Խորենացի 9 Բաղրամյան 79 ա Կիևյան 8 | Relax SPA | Սայաթ-Նովա 19 Անի Պլազա Հոթել |
| | | | | Massimo D | Սայաթ-Նովա 27 | | | Al Shadi ռեստորան | Նալբանդյան 48 | MAP կոշիկի խանութ | | Gold's Gym SPA | Կոմիտաս պող 40/1 |
| | | | | Geox | Հյուսիսային պող. 6/15 | | | | | | | | |
| | | | | Crocs | Տերյան 42 | | | | | | | | |


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 7.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: